ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ («TRACK 2»)
ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄԻՋԵՎ.
ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Սույն հետազոտությունն իրականացվել է Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աջակցությամբ: Հետազոտությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի տեսակետների հետ:

2025
ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ԽԱՂԱՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ	6
«ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ» ՓՈՒԼԵՐԸ	10
ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ	24
ԻՆՉՊԵՍ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ	33
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	37

ՆԱԽԱԲԱՆ

Հետազոտությունն իրականացվել է հարցազրույցների եւ հրապարակային նյութերի ուսումնասիրման, ինչպես նաեւ Երեւանի մամուլի ակումբի (ԵՄԱ) փորձագետների տրամադրած տեղեկատվության ամփոփման եւ վերլուծության միջոցով:

Հետազոտության նպատակներն էին՝ գույքագրել հայ-ադրբեջանական համագործակցության փորձը քաղաքացիական դիվանագիտության («Track 2» diplomacy) շրջանակներում, բացահայտել այս փոխգործակցության հեռանկարները նոր համատեքստում եւ մշակել առաջարկություններ երկխոսության ներկա եւ պոտենցիալ մասնակիցների, ինչպես նաեւ նման նախաձեռնություններին աջակցելու վերաբերյալ որոշումներ կայացնող ազգային եւ միջազգային մարմինների համար: Ադրբեջանցի գործընկերների հետ երկխոսության մեջ ներգրավված Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների եւ անհատների հետ հարցազրույցների համար պատրաստվել են հետեւյալ հարցերը (հարցազրույցների ընթացքում քննարկվել են նաեւ լրացուցիչ, պարզաբանող հարցեր):

1. Հայ-ադրբեջանական երկխոսության ի՞նչ ծրագրերի եք մասնակցել:
- Ու՞մ հետ եք համագործակցել (ո՞վ էր դոնորը, ո՞վ էր գործընկերը հայկական, ադրբեջանական կամ երրորդ կողմերից, եթե այդպիսիք կային):
- Խնդրում ենք նկարագրել ձեր դերը ծրագր/եր/ի իրականացման ընթացքում:
- Ի՞նչ գործողություններ են արվել ծրագրի շրջանակներում:
- Ի՞նչ արդյունքներ գրանցեցիք:

2. Եթե հայ-ադրբեջանական երկխոսության մեկից ավելի ծրագրեր եք իրականացրել կամ մասնակցել դրանց, խնդրում ենք նշել ամենահաջողված ծրագիրը:
- Ինչո՞ւ էր դա ամենահաջողվածը:
- Ինչո՞ւ էին մյուսը/մյուսները պակաս հաջողված:

3. Արդյո՞ք հայ-ադրբեջանական ծրագրեր իրականացնելիս երրորդ երկրների քաղհասարակության կազմակերպությունների հետ համագործակցության փորձ ունեցել եք (ո՛չ որպես դոնոր, այլ՝ որպես մասնակից):
- Եթե այո, ո՞ր երկրների (Վրաստան, Թուրքիա եւ այլն):
- Ինչպիսի՞ փորձ էր դա:

4. Ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացի ո՞ր շրջանն էր, ձեր կարծիքով, ամենահեռանկարայինը՝ համաձայնության հասնելու հնարավորության առումով: Ինչո՞ւ:

5. Ինչպե՞ս եք գնահատում Ռուսաստանի դերը հակամարտությունում՝ 1988 թվականից մինչեւ այսօր:

6. Արդյո՞ք ժողովրդական դիվանագիտությունն ազդեցություն ունեցել է կարգավորման գործընթացի վրա:

7. Ի՞նչ քաղաքական (աշխարհաքաղաքական) գործոններ եւ ո՞ր ժամանակահատվածներում են ազդել երկու երկրների քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջեւ երկխոսության (փոխազդեցության) ինտենսիվության եւ արդյունավետության վրա:

8. Քաղաքացիական հասարակության փոխգործակցության ո՞ր ձեւերն են առավել արդյունավետ եղել.

- մարդասիրական (ռազմագերիներ, պատանդներ, փախստականներ եւ այլն),
- խաղաղարար (մերձեցում, հաղորդակցություն եւ այլն),
- կարգավորման մոդելների քննարկում,
- փորձի փոխանակում իրավունքների եւ շահերի պաշտպանության, կյանքի տարբեր ոլորտներում բարեփոխումների խթանման եւ այլ հարցերի շուրջ,
- համատեղ հետազոտություններ,
- հակազդեցություն տեղեկատվական պատերազմներին եւ թշնամու կերպարի ձեւավորմանը,
- այլ:

9. Ո՞րն է Հայաստանի եւ Ադրբեջանի քաղհասարակությունների համագործակցության «ավելացված արժեքը»: Ինչքանո՞վ է այն պահանջված պաշտոնական մակարդակում:

10. Ի՞նչ դեր ունեն (պետք է ունենան) լրատվամիջոցները Ղարաբաղյան հակամարտության եւ հայ-ադրբեջանական հարաբերությունների լուսաբանման գործում:

11. Որքանո՞վ են Հայաստանում եւ Ադրբեջանում ՀԿ-ների գործունեության պայմանները թույլ տալիս արդյունավետ երկխոսություն քաղհասարակության, փորձագիտական հանրության եւ լրագրողների մակարդակով: Պատահե՞լ է, որ համագործակցության առաջարկ անեք ադրբեջանական կողմին եւ մերժում ստանաք՝ երկրում գոյություն ունեցող սահմանափակումների պատճառով:

12. Արդյո՞ք քաղհասարակության ներկայացուցիչների եւ լրատվամիջոցների համար ընդունելի է համագործակցությունը իրենց երկրների հատուկ ծառայությունների հետ՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների հետ կապված հարցերում: Որո՞նք են նման համագործակցության ընդունելի ձեւերը:

13. Ինչպիսի՞ փոփոխություններ են անհրաժեշտ, որպեսզի քաղհասարակությունը եւ լրատվամիջոցների ներկայացուցիչները հնարավորություն ունենան ավելի մեծ ներդրում ունենալ հակամարտությունների կարգավորման գործում:

14. Հայկական սփյուռքը կարո՞ղ է նպաստել հակամարտության կարգավորմանն ուղղված քաղաքացիական նախաձեռնություններին: Ինչպիսի՞ն կարող է լինել սփյուռքի ներդրումը:

15. Ինչպե՞ս եք գնահատում միջազգային (օտարերկրյա) դոնոր կազմակերպությունների ներդրումը հակամարտության կարգավորման գործում:

16. Ինչպե՞ս կարող են միջազգային եւ օտարերկրյա հասարակական կազմակերպությունները եւ վերլուծական կենտրոնները նպաստել հայ-ադրբեջանական երկխոսությանը եւ հակամարտությունների կարգավորմանը: Որքանո՞վ են նրանք արդյունավետ իրականացնում այս առաքելությունը:

17. Արդյո՞ք անհրաժեշտ է ձեռքբերումների եւ սխալների պարբերական համակողմանի վերլուծություն՝ քաղհասարակության, փորձագետների եւ լրատվամիջոցների մակարդակով՝ հետագա ջանքերի առաջնահերթությունները որոշելու համար: Արդյո՞ք հակամարտող կողմերը եւ միջազգային կառույցները նման վերլուծության կարիք ունեն՝ ներկա պայմաններում այն գործնականում կիրառելու համար:

ԽԱՂԱՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Այս հետազոտության շրջանակներում հարցազրույցներ են անցկացվել հայաստանյան ՔՀԿ հատվածի, փորձագիտական համայնքի եւ ՁԼՄ-ների քսան ներկայացուցիչների հետ, որոնք ադրբեջանցի գործընկերների հետ համագործակցելու որոշակի փորձ ունեն: Տվյալները վերլուծելու համար կարեւոր էր հասկանալ, թե հարցվածներն ընդհանուր առմամբ ինչ վերաբերմունք ունեն հակամարտության եւ կարգավորման հեռանկարների նկատմամբ (հարցաթերթիկի 4-րդ եւ 5-րդ հարցերը):

Հակամարտության կարգավորման ամենահարմար ժամանակահատվածի վերաբերյալ հարցման մասնակիցների կարծիքները զգալիորեն տարբերվում են: Հարցվածների մոտ մեկ քառորդը կարծում է, որ կարգավորման լավագույն հնարավորությունն ի հայտ է եկել 1992-1994 թվականների Ղարաբաղյան պատերազմի ավարտից անմիջապես հետո, երբ, որոշների կարծիքով, Հայաստանի ղեկավարությունը «անկախ աշխարհաքաղաքական միավոր» էր: Ավելին, Հայաստանը հաղթող կողմն էր եւ կարող էր վճռականորեն պաշտպանել իր ազգային շահերը՝ հրաժարվելով մաքսիմալիստական մոտեցումներից: Այնուամենայնիվ, այս մեկնաբանության կողմնակիցները կարծում էին, որ Ադրբեջանը երբեք չէր համաձայնի Լեռնային Ղարաբաղի որեւէ կարգավիճակի՝ իր սեփական ինքնիշխանությունից դուրս:

Բավականին տարածված դիրքորոշում էր կարգավորման հեռանկարները Հեյդար Ալիեւի անձի հետ կապելը, ով, որոշ հարցվածների կարծիքով, ավելի հակված էր փոխզիջման, քան նրա իրավահաջորդ որդին: Մասնավորապես, կարգավորման առումով խոստումնալից էին համարվում հայր Ալիեւի նախագահության վերջին տարիները: Ավելին, հարցվածներից մեկի կարծիքով՝ «Ադրբեջանը դեռ չէր դաստիարակել մի սերունդ, որն ատում է հայկական ամեն ինչ: Պատմության աղավաղումները դեռեւս լայն տարածում չէին գտել, եւ քարոզչական մեքենան այդքան ինտենսիվ չէր աշխատում՝ սահմանափակ լսարանի պայմաններում»: Կարծիք էր արտահայտվել նաեւ, որ կարգավորման համար քիչ թե շատ բարենպաստ ժամանակաշրջանը ձգվել է մինչեւ 2013 թվականը, երբ

միջնորդներն անկեղծորեն հետաքրքրված էին տարբեր փոխզիջումային տարբերակներ քննարկելու հարցով, բանակցություններն ինտենսիվ էին, եւ բազմաթիվ ծրագրերով ապահովվում էին մասնագետների, հասարակ մարդկանց եւ երիտասարդների միջեւ շփումները: Ադրբեջանում պահպանվում էին հարաբերական ազատությունները, իսկ Հայաստանում «ազատագրված տարածքների»՝ վերադարձի ենթակա լինելու նկատմամբ վերաբերմունքը դեռեւս չէր փոխվել:

Բանակցությունների համար խոստումնալից ժամանակահատվածների հիշատակման հաճախականությամբ երրորդ եւ չորրորդ տեղերը բաժանված են հակամարտության առաջին տարիների (1988-1991) եւ Ուկրաինայում պատերազմի սկսվելուց մինչեւ Լեռնային Ղարաբաղից հայերի զանգվածային արտագաղթն ընկած ժամանակահատվածի միջեւ: Առաջին տարբերակի կողմնակիցները նշում են այն փաստը, որ հասարակությունների միջեւ թշնամանքը դեռեւս այսքան չէր խորացել, եւ մարդկային կապերը դեռ թարմ էին. հենց այդ ժամանակ, ինչպես ասում է հարցվողներից մեկը՝ «պետք էր վերջակետ դնել, ոչ թե բազմակետ»: Պատասխաններից մեկում ավելի մանրամասնորեն են նշված կարգավորման ժամանակացույցը եւ մոդելը. Ղարաբաղի հայերի ինքնորոշումը Ադրբեջանի համար ընդունելի ձեւով՝ հնարավոր էր այն ժամանակահատվածում, երբ Արկադի Վոլսկին գլխավորում էր Լեռնային Ղարաբաղում գործող հատուկ կառավարման կոմիտեն: Սակայն վերջինիս առաջարկները բոյկոտվեցին տեղի հայկական վերնախավի կողմից. իրավիճակ, որում վճռորոշ դեր խաղաց ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Եթե Վոլսկու ծրագիրն իրականացվեր ԽՍՀՄ փլուզումից հետո, հայերն ու ադրբեջանցիները կարող էին խաղաղությամբ բաժանվել:

Երկրորդ տարբերակը (2022-2023 թթ.), ըստ դրա կողմնակիցների, հեռանկարային էր, քանի որ Ռուսաստանն ամբողջությամբ կենտրոնացած էր Ուկրաինայի պատերազմի վրա եւ չէր կարող, ինչպես նախկինում, բացասաբար ազդել կարգավորման գործընթացի վրա, իսկ արդեն Բաքվի եւ Երեւանի կողմից 2025 թվականի օգոստոսին նախաստորագրված համաձայնագիրն այն ժամանակ պետք է որ ընդունելի լիներ կողմերի համար եւ հնարավորություն կտար խուսափել 2023 թվականի սեպտեմբերի ողբերգական իրադարձություններից:

Հարցվածներից ոմանք կարծում էին, որ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման ամենաբարենպաստ հնարավորությունները բացվել են 2018 թվականին Հայաստանում տեղի ունեցած «թավշյա» հեղափոխությունից անմիջապես հետո: 1991 թվականից ի վեր, առաջին անգամ Հայաստանի իշխանություններն ունեին հանրային վստահության բարձր մակարդակ, վայելում էին Արեւմուտքի բարեհաճ վերաբերմունքը, որոշ ժամանակ Մոսկվայի կողմից պաշտոնապես ընկալվում էին առանց ակնհայտ բացասական արձագանքների, եւ նույնիսկ Ադրբեջանում մի որոշակի ժամանակահատված դիտարկվում էին որպես հեղինակավոր եւ խոստումնալից բանակցային գործընկեր:

Կար նաեւ այն տեսակետը, որ հակամարտության կարգավորումը բանակցային ճանապարհով՝ սկզբունքորեն անիրատեսական էր: Նախ, Մինսկի խումբը մի շարք պատճառներով անկարող էր հասնել այս նպատակին: Խմբի գործունեությունը վաղուց հիմնված էր այն կեղծ պատկերացման վրա, որ Հարավային Կովկասի բոլոր հակամարտությունները պետք է լուծվեն մեկ

տրամաբանությամբ: Տպավորություն կար, թե Մինսկի խմբի միջնորդները երբեք լրջորեն չէին զբաղվում կարգավորման հնարավորությունների որոնմամբ: Երկրորդ, հակամարտության տարբեր փուլերում կողմերը հետապնդում էին ոչ այնքան համաձայնության գալու, որքան՝ ժամանակ ձգելու ջանքեր, մինչեւ որ հասնեին բացառապես իրենց համար առավել բարենպաստ պայմանների: Սա ակնհայտ էր՝ հաշվի առնելով ներքին թշնամական քարոզչության անընդհատ աճող մակարդակը, ինչը վկայում էր այն մասին, որ Բաքուն եւ Երեւանն իրենց հասարակություններին ոչ թե պատրաստում են խաղաղության, այլ բորբոքում են հակամարտությունը: Այս իմաստով, 2020 եւ 2023 թվականների բազմաթիվ կորուստներից եւ հսկայական տրավմաներից հետո միայն պրագմատիկ բանակցային մոտեցումների հիմք դրվեց: Հետեւաբար, չնայած Ադրբեջանի ցուցադրական հոխորտանքներին եւ պարբերաբար կրկնվող սպառնալիքներին՝ պատերազմի վերսկսման հավանականությունը նոր փուլում զգալիորեն նվազել է, չնայած՝ լիովին չի էլ վերացել:

Բնական հարց է ծագում՝ արդյո՞ք հնարավոր էր խուսափել հակամարտությունից եւ դրա վերջին ողբերգական հետեւանքներից՝ 44-օրյա պատերազմից եւ Լեռնային Ղարաբաղի հայաթափումից: Այսպես, եթե հիմնվելու լինենք նախորդ պարբերությունում արտահայտված տեսակետի վրա, պատասխանը բացասական կլինի, քանի որ ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի եւ Ադրբեջանի ձեռք բերած անկախությունը կառուցված էր հակամարտության տրամաբանության վրա, այդ իսկ պատճառով, խուսափել վերջին ավելի քան երեսուն տարիների ընթացքում տեղի ունեցածից, թերեւս անհնար էր: Միեւնույն ժամանակ, արժե քննարկել այլընտրանքային թեմաներ. Օրինակ՝ թե ինչպիսի վարքագիծ պետք է ցուցաբերեին խորհրդային պետությունը եւ ազգային միավորումները, ասենք, 1960 - 1970-ական թվականներին՝ 1980-ականների վերջի հակամարտությունից խուսափելու համար: 1930-ական թվականներին խորհրդային իշխանությունը փորձեց արմատախիլ անել նացիոնալիզմը, բայց Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում եւ անմիջապես դրանից հետո Կրեմլը խրախուսեց ազգայնականության որոշակի դրսեւորումներ հայկական եւ այլ ազգային հասարակություններում՝ իր սեփական օգտի համար, քանզի սեփական ինքնության պաշտպանությունը դիտվում էր որպես ԽՍՀՄ արտաքին թշնամիներից պաշտպանվելու միջոց: Նման քաղաքականության նպատակահարմարությունը մարեց 1960-ականներին, սակայն գործընթացը կանգնեցնելը դարձավ անհնարին, կամ էլ՝ դա արդեն ծերացող կոմունիստական կուսակցապետության ուժերից վեր բան էր: Միեւնույն ժամանակ, միջէթնիկական, «քնած» հակամարտությունները, ամենայն հավանականությամբ, նախատեսված էին անհրաժեշտության դեպքում «բաժանիր եւ տիրիր» սկզբունքով գործածության համար: Ամեն դեպքում, 60 տարի առաջվա ժամանակահատվածն արժանի է առանձին ուսումնասիրության: Մանավանդ, որ Հայաստանի իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գաղափարախոսական օրակարգի հիմքը դարձած «չորրորդ հանրապետության» հայեցակարգն իր մեջ ներառում է այն կանխադրույթը, որ խորհրդային ղեկավարությունը 1940-1970-ական թվականներին արհեստականորեն է վերակենդանացրել հայ եւ հարեւան թյուրքական ժողովուրդների միջեւ հակասությունները:

Հարցման մասնակիցները բավական միակարծիք էին Ռուսաստանի դերի գնահատման հարցում: Կարծիքները տարբերվում էին թերեւս միայն արմատականության աստիճանով: Սկսած այն պնդումներից, որ խորհրդային

կենտրոնը եւ նրա իրավահաջորդը՝ Ռուսաստանի Դաշնությունն են ստեղծել հակամարտությունը եւ ամեն ինչ արել դրա լուծումը թույլ չտալու համար, մինչեւ այն, որ Մոսկվան այժմ էլ փորձում է այդ հակամարտությունը պահպանել: Բավականին տարածված կարծիք է, որ «Ալիեւը երբեք չէր սկսի 2020 թվականի պատերազմը եւ չէր իրականացնի 2023 թվականի էթնիկ զտումները, եթե Կրեմլից «դաբռո»՝ թույլտվություն չստանար»: Հայաստանում ռուսական աջակցությունից օգտվում են այն քաղաքական ուժերը, որոնք խոչընդոտում են Բաքվի եւ Երեւանի միջեւ համաձայնությունները: Ինչպես նշել է հարցվածներից մեկը. «Ռուսաստանը դասական կայսրություն է, որը ձգտում էր պահպանել իր գերիշխանությունը խորհրդային դարաշրջանում, եւ վերջին տարիներին հետաքրքրված է եղել տարածաշրջանում իր ներկայությունն ու ազդեցությունը մեծացնելով: Կարելի է ասել, որ հակամարտության հիմնական շահառուն Ռուսաստանն է»:

Միեւնույն ժամանակ, կարծիք է հնչել, որ Ռուսաստանի դերը տարբեր է եղել՝ կախված կոնկրետ ժամանակաշրջաններից: Որոշ հարցվածներ Ռուսաստանի շահերի փոփոխություններով են պայմանավորել վերջինիս աջակցությանը մե՛կ Հայաստանին, մե՛կ Ադրբեջանին: Հարցման որոշ մասնակիցներ գնահատում են Ռուսաստանի միջնորդական ջանքերը, որոնք կարեւորագույն նշանակություն ունեցան 1994 թվականի մայիսին հրադադարի կնքման գործում, իսկ հետագա տարիներին՝ Արեւմուտքի հետ համագործակցությամբ նրա հետաքրքրվածության արդյունքում, կառուցողական դեր խաղացին բանակցային գործընթացում: Նոր հազարամյակի առաջին տասնամյակում Մոսկվայի միջնորդական ջանքերի աշխարհաքաղաքական բաղադրիչը դարձավ գերակշռող, ինչը հակասում էր կարգավորման հեռանկարներին առավելապես այն պատճառով, որ միջազգային հանրությունն ամբողջ գործընթացն աստիճանաբար պատվիրակեց հենց Մոսկվային: Ուկրաինայի դեմ պատերազմի մեջ գտնվելը եւ մինչ այդ էլ հարաբերությունների վատթարացումն Արեւմուտքի հետ, այդ թվում՝ Մինսկի խմբի մյուս համանախագահների հետ, մի կողմից թուլացրեց Մոսկվայի ազդեցությունը Հարավային Կովկասում, իսկ մյուս կողմից՝ մեծացրեց նրա կախվածությունը Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերություններից, ինչը հանգեցրեց Հայաստանի եւ Ղարաբաղի հայերի համար անբարենպաստ զարգացումների: Եթե Ռուսաստանին հաջողվեց 2016 թվականի ապրիլին դադարեցնել պատերազմը, ապա 2020 թվականին արդեն՝ ոչ: 44-օրյա պատերազմի ավարտից եւ նույնիսկ խաղաղապահ զորքեր տեղակայելուց հետո Ռուսաստանը չկարողացավ կատարել իր առաքելությունը եւ կանխել հայերի զանգվածային արտագաղթը Լեռնային Ղարաբաղից:

Հայ-ադրբեջանական հարաբերություններում Ռուսաստանի դերի մասին հարցն ամփոփելու համար տեղին է մեջբերել հարցման որոշ մասնակիցների արտահայտած վստահությունը, որ այս տերության դերը՝ դրական կամ բացասական, առաջին հերթին կախված կլինի նրանից, թե որքանով Հայաստանն ու Ադրբեջանը թույլ կտան երրորդ կողմերին՝ մանիպուլացնել իրենց հակասությունները՝ դրանք հաղթահարելու կամ երկխոսության միջոցով հարթելու փոխարեն:

«ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ» ՓՈՒԼԵՐԸ

Հայ-ադրբեջանական հարաբերությունների նորագույն պատմության մեջ կարելի է առանձնացնել չորս դրվագ, որոնցում ե՛ւ կողմերը, ե՛ւ միջնորդները, այս կամ այն չափով, առնվազն հռչակագրային մակարդակով ընդունել են «հասարակություններին խաղաղության նախապատրաստելու» գաղափարը: Այս թեման առաջին անգամ արդիական դարձավ 1994 թվականի մայիսին կնքված հրադադարից հետո: ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո Բաքուն եւ Երեւանը միացան հակամարտության կարգավորման բանակցություններին, եւ չնայած պաշտոնապես չհայտարարեցին քաղաքացիական դիվանագիտության կարեւորության մասին, սակայն «Track 2» շրջանակում երկխոսություն հաստատելու հարցում միջազգային կազմակերպությունների ջանքերը որոշակի աջակցություն ստացան երկու երկրների իշխանությունների կողմից: «Հասարակություններին խաղաղության նախապատրաստելը» առաջին անգամ որպես Հայաստանի եւ Ադրբեջանի պաշտոնական օրակարգի մաս ճանաչվեց Հեյդար Ալիեւի եւ Ռոբերտ Քոչարյանի միջեւ Քի Վեսթում 2001 թվականի մարտին կայացած բանակցություններից հետո:

Իսկ «թավշյա հեղափոխությունից» հետո, ինչպես Երեւանում կամ Բաքվում ղեկավարության փոփոխության նախորդ դեպքերում, ի հայտ եկավ այլ իրավիճակ, որը Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ նոր միտումների որոշակի սպասումներ արթնացրեց: 2018 թվականին հնարավորություն ստեղծվեց վերականգնելու երկկողմ շփումները, որոնք ընդհատվել էին 2016 թվականի ապրիլյան պատերազմից հետո, եւ միջնորդներն ավելի ակտիվ դարձան: Իլհամ Ալիեւի եւ Նիկոլ Փաշինյանի միջեւ շփումներ տեղի ունեցան, եւ արտգործնախարարների մակարդակով բանակցություններն ակտիվացան: 2019 թվականի հունվարի 16-ին Ադրբեջանի եւ Հայաստանի դիվանագիտության ղեկավարներ Էլմար Մամեդյարովը եւ Զոհրաբ Մնացականյանը պաշտոնական հայտարարություն տարածեցին, որում ամենանշանակալին ժողովուրդներին խաղաղության պատրաստելու անհրաժեշտության վերաբերյալ ձեւակերպումն էր: Ենթադրվում էր, որ այս նպատակին հասնելու ճանապարհներից մեկը երկխոսությունը խթանելն է՝ ոչ միայն պաշտոնական մակարդակով, այլ նաեւ հանրային մասնակցությամբ: Համատեղ մարդասիրական նախագծերի հնարավորությունը քննարկվեց Իլհամ Ալիեւի եւ Նիկոլ Փաշինյանի միջեւ 2019 թվականի մարտի 29-ին կայացած հանդիպումից հետո: Սակայն այն փաստը, որ իրադարձությունները բոլորովին այլ ընթացք ստացան, որոշ իմաստով հավանաբար պայմանավորված էր այդ շրջանում հակամարտության սկզբից ի վեր հանրային երկխոսության ամենացածր մակարդակով:

Փորձը ցույց է տալիս, որ երբ որոշում կայացնող կողմերի մասնակցությամբ կարգավորման գործընթացում առաջընթաց չկա, քաղաքացիական մակարդակով վերացական խաղաղաշինությունը վաղ թե ուշ դատապարտված է ճգնաժամի: Սակայն մյուս կողմից՝ «երկրորդ հարթակի» երկխոսության սառեցումը եւ հասարակությունների՝ միմյանցից լիակատար օտարացումը չեն կարող բացասաբար չանդրադառնալ պաշտոնական բանակցությունների արդյունավետության վրա: Նմանատիպ եզրակացությունների են հանգեցրել նաեւ Ադրբեջանում եւ Հայաստանում տարբեր կազմակերպությունների, այդ թվում՝

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի եւ Երեւանի մամուլի ակումբի կողմից երկխոսության հեռանկարների վերաբերյալ անցկացված նախորդ հետազոտությունները: Ցավոք, նախորդ երկու դրվագներում, երբ պաշտոնական կողմերը հայտարարեցին հասարակություններին խաղաղության նախապատրաստելու անհրաժեշտության մասին, տեղի ունեցավ հակառակը: Հետեւաբար, կարեւոր է, որ Բաքվի եւ Երեւանի կողմից վերջին ամիսներին արված նմանատիպ հայտարարությունները, որոնք կարելի է համարել չորրորդ դրվագ, չհակասեն իրական մտադրություններին եւ գործողություններին: Եվ որ քաղաքացիական նախաձեռնություններին աջակցելու հարցում շահագրգռվածությունը չլինի միայն միջազգային կազմակերպությունների կողմից:

Համաձայն ԵՄԱ 2018-2019 թվականների հետազոտության, որին մասնակցել են նաեւ ադրբեջանցի փորձագետներ, լրագրողներ եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը նպաստող «Track 2» նախաձեռնությունների պատմությունը պայմանականորեն բաժանվում է մի քանի փուլերի. 1. խորհրդային շրջանի նախաձեռնություններ (1988-1991 թթ.), 2. կապեր հակամարտության «թեժ փուլի» ընթացքում (1992-1994 թթ.), 3. երկխոսության հաստատում հրադադարի վերաբերյալ համաձայնությունների ձեռքբերումից հետո (1995-1997 թթ.), 4. առավել ինտենսիվ փոխազդեցության եւ համատեղ նախագծերում հանրության մեծ թվով ներկայացուցիչների ներգրավվածության շրջան (1998-2001 թթ.), 5. տարածաշրջանային փոխգործակցության «մարող իներցիա» (2001-2010 թթ.), 6. «քաղաքացիական դիվանագիտության» «սառցե դարաշրջան» (2011 թվականից մինչեւ վերոնշյալ հետազոտության իրականացման պահը):

Առաջարկվող ժամանակագրության պայմանական բնույթը, բնականաբար, ենթադրում է փուլերի միջեւ սահմանների մշուշոտություն եւ յուրաքանչյուրի ներսում տարբեր միտումների առկայություն: Այնուամենայնիվ, այն նպաստում է քաղաքացիական հասարակության եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների՝ Ղարաբաղյան հակամարտության համատեքստի ձեւավորման գործում ներգրավվածության տարբեր փուլերում փոփոխվող առանձնահատկությունների ըմբռնմանը:

Վերոնշյալ հետազոտությունից անցած 6 տարիների ընթացքում (2019–2025 թթ.) ոչ պաշտոնական շրջանակների հնարավոր մասնակցությամբ երկխոսության նախաձեռնությունները կարելի է դասակարգել եւս երկու փուլով. 7. առավելագույն դիմակայություն ոչ միայն ռազմական եւ քաղաքական ասպարեզներում, այլեւ հանրային եւ անձնական մակարդակներում, այդ թվում՝ լրատվամիջոցներ, փորձագիտական համայնք, ոչ կառավարական կազմակերպությունների (ՔՀԿ) հատված եւ սոցիալական ցանցերի ակտիվ օգտատերեր... (2019-2023 թթ.), 8. երկխոսության հաստատման համեստ փորձեր նոր պայմաններում, որոնք տարբերվում են ինչպես Խորհրդային Միության ժամանակներից, առաջին Ղարաբաղյան պատերազմից, 1994 թվականի հրադադարի արդյունքում ձեւավորված հարաբերական ստատուս-քվոյի պահպանման շրջանից, այնպես էլ 2016 թվականի ապրիլյան սրացման եւ 2024 թվականի սկզբին Խաղաղության համաձայնագրի եւ միջպետական հարաբերությունների հաստատման տեքստի համաձայնեցման միջեւ եղած տարբեր ինտենսիվության նոր սրացումների փուլերից:

Հետեւաբար, այս ժամանակահատվածի հետհաշվարկը, որը շարունակվում է սույն հետազոտության պահին, կարող է սկսվել 2023 թվականի վերջից - 2024 թվականի սկզբից («գերակշռող կառուցողականության» շրջան): Ստորեւ ներկայացված է նշված ութ ժամանակահատվածներից յուրաքանչյուրի նկարագրությունը՝ հիմնված ինչպես վեց տարի առաջ կատարված հետազոտության, այնպես էլ վերջին տվյալների վերլուծության վրա:

1980-ականների վերջին, Խորհրդային Ադրբեջանում եւ Խորհրդային Հայաստանում ազգային շարժումների ակտիվացման ընթացքում, որի հիմնական խթանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրացումն էր՝ ուղեկցված էթնիկ հողի վրա բռնության ալիքներով, ադրբեջանական եւ հայկական հասարակության տարբեր շրջանակների միջեւ շփումները բավականին ինտենսիվ էին: Ընդ որում, այդ շփումները ներառում էին ոչ միայն խորհրդային նոմենկլատուրային ձեւաչափերը, որոնցում քարոզվում էր «ԽՍՀՄ-ում միասին ապրելու դրական փորձը», այլ նաեւ՝ իշխանության այդ ժամանակների հակառակորդներին: Վերջիններիս միավորող գաղափարները անկախության եւ կոմունիստական կայսրությունից ազատագրվելու ձգտումներն էին: Մասնավորապես, իշխանության եկած Հայոց համազգային շարժման եւ Ադրբեջանի Ժողովրդական ճակատի ներկայացուցիչների միջեւ երկխոսությունը բավականին ակտիվ էր՝ խորհրդային այլ հանրապետությունների, հիմնականում՝ Մերձբալթյան երկրների ժողովրդավարական ուժերի միջնորդությամբ: Թեպետ Ադրբեջանում եւ Հայաստանում հետկոմունիստական իշխանության հաստատումից հետո փոխզիջումների հասնելու հավատը ավելի շատ բնորոշ էր վերը նշված միջնորդներին, քան՝ հակամարտության կողմերին, այդուհանդերձ, այն մեծապես ձեւավորում էր շփումների օրակարգը եւ դրանց գրավչությունը մասնակիցների համար:

Նույնիսկ 1990-ականների սկզբին, երբ Բաքուն եւ Երեւանը նոր էին ձեռք բերում միջազգային սուբյեկտայնություն, երբ հակամարտությունը «միջազգայնացվում» էր, իսկ դիմակայությունն ամենաթեժ փուլում էր, Ադրբեջանի եւ Հայաստանի ներկայացուցիչները շարունակում էին պահպանել շփումները տարբեր ձեւաչափերով: Հակամարտության կարգավորման հույսերից բացի՝ կար նաեւ հետաքրքրություն որոշակի խնդիրներ լուծելու, տեղեկատվություն փոխանակելու եւ հարեւան երկրում տեղի ունեցող գործընթացները հասկանալու հարցում: Օրինակ՝ 1990 թվականին հետկոմունիստական Հայաստանի խորհրդարանի կողմից հիմնադրված «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի խմբագրությունում լրագրողների կանոնավոր հեռախոսազրույցները նոր սերնդի ադրբեջանցի հայտնի գործիչների հետ՝ սովորական երեւույթ էին, երբ հարեւան հանրապետությունում տեղի էին ունենում լրատվական արժեք ունեցող իրադարձություններ: Պաշտոնական Երեւանն էլ նմանատիպ բացություն էր ցուցաբերում ադրբեջանցի լրագրողների նկատմամբ: Սակայն ԽՍՀՄ վերջնական փլուզումից հետո այս փոխադարձ հետաքրքրությունն արագորեն սկսեց զիջել նոր իշխանությունների միջեւ թշնամանքին:

1992–1994 թթ. պատերազմի տարիներին արդիական դարձան իրավապաշտպանների միջեւ շփումները՝ կապված ռազմագերիներին ու պատանդներին առնչվող հիմնահարցերի, անհետ կորածների որոնման եւ զոհվածների դիակների վերադարձի հետ: Այս ժամանակահատվածում հայկական եւ ադրբեջանական մի շարք հասարակական կազմակերպություններ ակտիվ աշխատանք էին ծավալում՝ համագործակցելով Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի

միջազգային կոմիտեի, այլ արտասահմանյան մարդասիրական առաքելությունների, ինչպես նաեւ հակամարտող կողմերի համապատասխան պետական կառույցների հետ:

Իհարկե, պաշտոնյաների գործունեությունն ի սկզբանե հազվադեպ էր անկեղծ եւ կառուցողական լինում, սակայն նրանց հարկադրված փոխգործակցությունը միջազգային կազմակերպությունների եւ քաղաքացիական ակտիվիստների հետ կարեւոր դեր խաղաց բազմաթիվ մարդկանց ճակատագրերում: Մասնավորապես, այս աշխատանքում ներգրավված էին հայկական կողմից Լարիսա Ալավերդյանի «Ընդդեմ իրավական կամայականությունների» հիմնադրամը եւ Էլդար Զեյնալովի ղեկավարած Ադրբեջանի Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոնը: Զինադադարի հաստատումից հետո ստեղծվեց պատանդների եւ ռազմագերիների հարցերով Միջազգային խումբ, որի կազմում ընդգրկված էին իրավապաշտպաններ Ադրբեջանից, Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից, ինչպես նաեւ Ռուսաստանից եւ Վրաստանից: Ճիշտ է, այս խումբը չկարողացավ խուսափել արտաքին քաղաքական մանիպուլյացիաներից, ինչի հետեւանքով նրա գործունեությունը պարբերաբար սառեցվում էր եւ ապա վերականգնվում, մինչեւ որ լիովին դադարեցվեց:

1990-ականների առաջին կեսին, միջազգային կազմակերպությունների հովանու ներքո ընթացող հումանիտար գործնական աշխատանքին զուգահեռ, զարգացում ապրեց նաեւ ադրբեջանցի եւ հայ իրավապաշտպանների միջեւ խաղաղության շուրջ երկխոսությունը: Այս գործընթացում ամենահնչեղ իրադարձությունը 1992 թվականին Ուլոֆ Պալմեի մրցանակի հանձնումն էր Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի (ՀՔԱ) ադրբեջանական եւ հայկական բաժանմունքների ղեկավարներ Արզու Աբդուլաեւային եւ Անահիտ Բայանդուրին:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի գործունեության մեջ «սկանդինավյան ակցենտը» չսահմանափակվեց միայն 1986 թվականին սպանված Շվեդիայի վարչապետ Ուլոֆ Պալմեի անվան մրցանակով: Այն արտահայտվեց նաեւ զինադադարի կնքումից հետո, հակամարտող կողմերի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին Ֆինլանդիայի կազմում գտնվող շվեդական Ալանդյան ինքնավարության մոդելի հետ ծանոթացման ձեւով: Պատերազմից հետո խաղաղարար շրջանակներում այս մոդելը դիտարկվում էր որպես Լեռնային Ղարաբաղի համար հնարավոր ընդունելի տարբերակ: ՀՔԱ բաժանմունքների նախաձեռնությամբ «ալանդյան գործընթացում» ներգրավվեցին նաեւ պետական պաշտոնյաներ, որոնց մասնակցությամբ ծագած մի միջադեպ լուրջ հարցականի տակ դրեց սկանդինավյան փորձի կիրառելիությունը Հարավային Կովկասում: 1995 թվականին հանդիպումներից մեկի ժամանակ, չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտգործնախարար Արկադի Ղուկասյանը նշեց, որ մոդելը հրաշալի է, բայց չէ՞ որ «ադրբեջանցիները ֆիններ չեն»: Իսկ Ադրբեջանի այդ ժամանակվա փոխարտգործնախարար Թոֆիկ Զուլֆուգարովը հակադարձեց՝. «...բայց դուք էլ շվեդներ չեք, ընկեր հայեր»:

1994 թվականի մայիսին հաստատված հրադադարի ռեժիմի վերաբերյալ Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարության ներկայացուցիչների կողմից ստորագրված համաձայնությունները լայն հնարավորությունների դարպաս բացեցին միջազգային կառույցների, դոնորների եւ արեւմտյան ոչ կառավարական կազմակերպությունների համար՝ իրականացնելու «Track 2» տրամաբանությանը համապատասխան բազմաթիվ ու

բազմազան նախագծեր: Այս ոլորտում նախաձեռնողականությամբ հանդես եկան ինչպես միջկառավարական կառույցներ (օրինակ՝ ԵԱՀԿ-ն), այնպես էլ ոչ կառավարական կազմակերպություններ («Vertic», «Links», Institute of War and Peace Reporting (Պատերազմի եւ խաղաղության լուսաբանման ինստիտուտ), Conciliation Resources (Հաշտեցման ռեսուրսներ), International Alert (Միջազգային ահազանգ եւ այլք): Երկխոսության հարթակները, որոնք Հարավային Կովկասի գործընկերներին առաջարկվեցին այս կազմակերպությունների կողմից, հետագայում ճանապարհ հարթեցին նաեւ տեղական նախաձեռնությունների համար: Սակայն սկզբնական շրջանում այդ միջոցառումները տարածաշրջանի մասնակիցների կողմից ընկալվում էին որպես պատերազմի շարունակություն, պարզապես՝ այլ մեթոդներով: Կողմերը ձգտում էին ապացուցել հակամարտության հարցում իրենց ճշմարտացիությունը եւ հակառակ կողմի մեղավորությունը՝ ակնկալելով, որ լեզվակռիվների արդյունքում կհասնեն իրենց ընդդիմադիրների լիակատար եւ անվերապահ կապիտուլյացիային:

Հայաստանի եւ Ադրբեջանի լրագրողական կազմակերպություններն առաջիններից էին, որ գտան համագործակցության պրագմատիկ ձեւեր: Գիտակցելով, որ չնայած միմյանց նկատմամբ իրենց հասարակությունների թշնամական վերաբերմունքին, հարեւան երկրում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ հետաքրքրությունը բավականին բարձր է, նրանք հաճախակի շփումներն օգտագործեցին լրատվամիջոցների միջեւ մասնագիտական համագործակցություն հաստատելու համար: «Ինտերնյուսը» կազմակերպեց թեմատիկ հեռուստակամուրջների շարք, որոնք չնայած անցնում էին «գաղափարական ըմբշամարտի» ոճով, բայց միեւնույն ժամանակ, ադրբեջանական եւ հայկական լսարաններին հնարավորություն տվեցին իրենց հարեւանների կյանքի մասին իմանալ «կենդանի մարդկանցից»: Երեւանի մամուլի ակումբը եւ նրա ադրբեջանցի գործընկերներն օգտվեցին իրենց երկրների ցանկությունից՝ ակտիվորեն ինտեգրվել համաշխարհային հանրությանը եւ որոշակի պարտավորություններ ստանձնելով՝ շարժվել դեպի Եվրոպայի խորհրդի անդամակցություն: Այս առումով, խոսքի եւ տեղեկատվության ազատության պաշտպանության հարցում փորձի փոխանակումը երկկողմանի հետաքրքրություն էր ներկայացնում: 1990-ականների երկրորդ կեսը մի ժամանակաշրջան էր, երբ հայաստանյան եւ ադրբեջանական մեդիա դաշտերի իրավիճակներն էապես մերձեցան՝ դառնալով իրենց պատմության ընթացքում ամենամոտը: Հայաստանում լրագրողների իրավունքներն ավելի լավ էին պաշտպանված, եւ հեռարձակման ոլորտում առկա էր բազմակարծություն, փոխարենը՝ Ադրբեջանում, հատկապես 1998 թվականին ռազմական ցենզուրայի վերացման եւ տնտեսական աճի շնորհիվ, իրական մեդիա բիզնեսը սկսեց զարգանալ: Մաքուր լրագրողական թեմաների քննարկումը ոչ միայն նպաստում էր մասնագիտական խնդիրներն ավելի լավ ըմբռնելուն, այլ նաեւ մասնակիցներին սովորեցնում էր հարգանքով վերաբերվել ընդդիմախոսների տեսակետին: Հետագայում դա նպաստեց փոխըմբռնման խորացմանը նաեւ հակամարտությանն անմիջականորեն առնչվող հարցերին անդրադառնալիս:

Նույնը կարելի է ասել նաեւ այլ ոլորտներում իրականացված ծրագրերի մասին, որոնք նպաստում էին մասնագիտական եւ անձնական շփումներին՝ շրջանցելով բազմաթիվ հակասությունների «ականապատ դաշտերը»: Սոցիալական խնդիրների, բնապահպանական մարտահրավերների, կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների եւ նմանատիպ այլ հարցերի շուրջ ձեւավորված ընդհանուր մտահոգություններն օգնում էին հասկանալ այն արժեքներն ու

խնդիրները, որոնք կարող են մոտեցնել եւ միավորել հայկական ու ադրբեջանական հասարակություններին: Թեմատիկ ոլորտներում կապերի ամրապնդմանը մեծապես նպաստեց 1990-ականների կեսերից մինչեւ վերջն ընկած ժամանակահատվածում միջազգային հանրության աճող հետաքրքրությունը Հարավային Կովկասի նկատմամբ՝ որպես միասնական տարածաշրջանի: Այդ հետաքրքրությունն իր հերթին պայմանավորված էր ԱՄՆ-ի, եվրոպական երկրների, ինչպես նաեւ ենթակառուցվածքային, հատկապես էներգետիկ ծրագրերում միջազգային խոշոր ընկերությունների ներգրավմամբ:

Տարածաշրջանային ձեւաչափերով հետաքրքրված քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պատրաստակամությամբ օգտվեցին ստեղծված իրավիճակից: Եռակողմ՝ հայ-ադրբեջանա-վրացական ձեւաչափով նախագծերն առավել լայն տարածում ստացան՝ շնորհիվ ամերիկյան «Եվրասիա» հիմնադրամի կողմից 1997 թվականին մեկնարկած «Synergy in the South Caucasus» («Համագործակցություն Հարավային Կովկասում») ծրագրի: Այդ նախաձեռնության միջոցով տասնյակ հասարակական կազմակերպություններ հարեւան երկրների գործընկերների հետ համատեղ աշխատանքի փորձ ձեռք բերեցին: Նախագծերի այսպիսի զանգվածային բնույթն ինքնին նպաստում էր «թշնամու կերպարի» հաղթահարմանը՝ առնվազն միջոցառումների անմիջական մասնակիցների շրջանում:

Տարածաշրջանային ձեւաչափով շփումները հնարավորություն էին տալիս նաեւ համեմատելու հակամարտությունների նկատմամբ տարբեր մոտեցումները եւ դրանց կարգավորման հնարավոր տարբերակները՝ չճանաչված Աբխազիայի, Հարավային Օսիայի եւ Լեռնային Ղարաբաղի պարագայում: Լավագույն նախագծային գաղափարներից էին այն հետազոտությունները, որոնք ցույց էին տալիս, թե տարածաշրջանը զարգացման ինչ հեռանկարներ կարող է ունենալ, եթե հակամարտությունները չխանգարեն համագործակցությանը: Ընդ որում, եթե հայկական կողմը պաշտոնական մակարդակում պատրաստակամ էր՝ մինչեւ Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը դիտարկելու նման գործընկերության հնարավորությունները, ապա ադրբեջանական կողմը համագործակցության պարտադիր նախապայման էր համարում իր տարածքային ամբողջականության ճանաչումը: Այս փոխբացառող մոտեցումներն աստիճանաբար նվազեցրին Հարավային Կովկասի բոլոր երկրների մասնակցությամբ տարածաշրջանային նախաձեռնությունների արդիականությունը թե՛ տնտեսական, թե՛ այլ ոլորտներում: Սա, բնականաբար, արտացոլվեց նաեւ «Track 2»-ում, եւ հակամարտության թեման կրկին գերակա դարձավ համագործակցության գաղափարի նկատմամբ:

Այս տեսանկյունից արժեքավոր էին այն նախաձեռնությունները, որոնք չկենտրոնացան բացառապես Հարավային Կովկասի վրա՝ որպես մեկ ամբողջական տարածաշրջանի, այլ նպատակ ունեին հայկական եւ ադրբեջանական լսարաններին ծանոթացնել աշխարհի տարբեր մասերում գոյություն ունեցող միջէթնիկական հակամարտություններին եւ դրանց կարգավորման փորձերին: Բալկաններում, Կիպրոսում, Պաղեստինում, Հյուսիսային Իռլանդիայում, Հարավային Տիրոլում եւ այլ վայրերում տեղի ունեցած հակամարտությունների վերաբերյալ համատեղ կինոդիտումներն ու փորձագիտական համեմատական վերլուծությունները նպաստում էին նոր հայացքների ձեւավորմանը՝ օգնելով կողմերին համատեղ քննարկել եւ ուսումնասիրել հնարավոր մոդելներ, որոնք ապագայում կարող էին կիրառելի

լինել նաեւ Լեռնային Ղարաբաղի դեպքում: Այսպիսով, թե՛ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից 2000-ականների երկրորդ կեսից արված առաջարկություններում, թե՛ նաեւ քաղաքացիական եւ փորձագիտական հարթակներում մշակված նյութերում արդեն իսկ նկատվում էր այս միջազգային փորձի ազդեցությունը՝ համապատասխանեցված Ղարաբաղյան հակամարտության առանձնահատկություններին:

Երկխոսության ամենադինամիկ շրջանը 1998-2001 թվականների եռամյա ժամանակահատվածն էր, երբ ադրբեջանցի մասնակիցներն այցելեցին Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ, իսկ հայ մասնակիցները՝ Ադրբեջան: Նրանք կարողացան անձամբ շփվել քաղաքական գործիչների եւ սովորական քաղաքացիների հետ եւ իրենց սեփական տեսակետներն ունենալ հակամարտությունը վերափոխելու վերաբերյալ: Այստեղ առաջամարտիկների թվում, վերը նշված որոշ կազմակերպությունների հետ մեկտեղ, գերմանական Ֆրիդրիխ Էբերտի եւ Ֆրիդրիխ Նաումանի հիմնադրամներն էին եւ Շվեյցարիայի արտաքին գործերի դաշնային դեպարտամենտը, որոնց կողմից իրականացված բազմամյա նախագծերը ենթադրում էին հայ-ադրբեջանական միջոցառումներ՝ ոչ միայն «չեզոք տարածքներում»: Ընդ որում, 1990-ականների վերջի մի քանի զուգահեռ նախագծերի մասնակիցներ առիթ ունեցան հանդիպելու ԱՀ եւ ՀՀ նախագահներ Հեյդար Ալիեւի եւ Ռոբերտ Քոչարյանի, ինչպես նաեւ երկու կողմերի այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Հաճախակի ուղեւորությունների վերջը դրվեց 2001 թվականի աշնանը, երբ Բաքվում Լեռնային Ղարաբաղից եւ Հայաստանից ժամանած լրագրողների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ կապված միջադեպ տեղի ունեցավ: Մասնավորապես, հեռուստախցիկների առջեւ ագրեսիա դրսեւորվեց «Հելսինկյան նախաձեռնություն-92» կազմակերպության նախագահ Կարեն Օհանջանյանի նկատմամբ: Դեպքի պատահական չլինելը հաստատվեց մեկ ամիս անց, երբ հայ լրագրողների հերթական խմբի այցը Ադրբեջան անցավ չափազանց լարված եւ տեղական մեդիայում ներկայացվեց թշնամական լուսաբանմամբ: Այս ամենից պարզ դարձավ, որ հայ-ադրբեջանական երկկողմանի ուղիղ շփումների համար ծանր ժամանակներ են սկսվում:

Իրենց հաջողության գագաթնակետին հասած երկխոսության նախագծերի մասնակիցները ստիպված էին հրաժարվել այն պատրանքից, որ ժողովրդական դիվանագիտությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում կարող է էական եւ ինքնուրույն դեր խաղալ՝ անկախ իշխանությունների հետաքրքրվածությունից: Իսկ պաշտոնական մակարդակով երկխոսության հեռանկարների բացակայությունը պայմանավորվեց նաեւ քաղաքացիական դիվանագիտության՝ «Track 2»-ի գաղափարի որոշակի մարգինալացումը:

Չի բացառվում, որ լրագրողների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների շփումների սահմանափակումն ուղղակիորեն կապված էր Ռոբերտ Քոչարյանի եւ Հեյդար Ալիեւի՝ ամերիկյան Քի Վեսթում տեղի ունեցած վերոհիշյալ հանդիպման հետ: Բանակցությունները տեւել էին մի ամբողջ շաբաթ, սակայն որեւէ փաստաթուղթ չէր ստորագրվել: Ինչպես նշվում էր, Քոչարյանն ու Ալիեւը բաժանվեցին՝ ստանալով իրենց հասարակություններին հաշտեցման պատրաստելու վերաբերյալ միջնորդների հորդորը, սակայն իրականում տեղի ունեցավ հակառակը: Ադրբեջանական մոտ 600 կազմակերպություններ եւ հասարակական գործիչներ ստորագրեցին հայ-ադրբեջանական

հակամարտության կարգավորման սկզբունքների մասին Համազգային խարտիան, որում բացառվում էր որեւէ համաձայնություն կողմերի միջեւ՝ մինչեւ «ադրբեջանական հողերի ազատագրումը» եւ փախստականների վերադարձը: Լեռնային Ղարաբաղի հայերի համար Խարտիան ստորագրողները նախատեսել էին «մշակութային ինքնավարություն»: Իրենց հերթին՝ Հայաստանի խորհրդարանի բոլոր խմբակցությունները հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ բացառելով որեւէ փաստաթղթի ստորագրում, որով կենթադրվեր Լեռնային Ղարաբաղի անմիջական ենթակայությունը Բաքվին:

Քի Վեսթի ձախողումից առաջ եւ հետո հակամարտության կարգավորման նախաձեռնությունների շարքում առանձնանում էին ամերիկացի քաղաքական գործիչ Փոլ Գոբլի (1996 թ.)՝ Բաքվի եւ Երեւանի միջեւ տարածքային փոխանակման ծրագիրը եւ Դարտմութի համաժողովը (2001-2007 թթ.): Վերջինիս շրջանակներում աշխատանքային խմբի համանախագահներ՝ ամերիկացի եւ ռուս դիվանագետներ Հարոլդ Սանդերսը եւ Վիտալի Նաումկինը, որոնք Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի հասարակության ներկայացուցիչների 11 հանդիպումների մոդերատորներն էին, փորձեցին օգտագործել Մերձավոր Արեւելքի կարգավորման վերաբերյալ Քեմփ Դեյվիդի համաձայնագրերի փորձը: Սակայն այս երկու նախաձեռնություններն էլ միայն մասամբ կարող են դիտարկվել «Track 2»-ի համատեքստում, քանի որ, ըստ էության, դրանք չէին հենվում որեւէ էական հանրային աջակցության վրա եւ, ավելի շուտ, խորհրդատվական դեր էին կատարում պաշտոնական բանակցային գործընթացի համար: Հետագայում ձեռնարկվեցին նմանատիպ, բայց ավելի փոքր մասշտաբի քայլեր, որոնք պայմանականորեն անվանվեցին «Track 1.5»:

Կարգավորման խիստ ազգային շրջանակների ամրագրումը, ինչպես նաեւ Ադրբեջանում մամուլի ազատությունն ու քաղաքացիական հասարակությանը սահմանափակելու ուղղությամբ ձեռնարկված քայլերը հանգեցրեցին երկկողմ եւ տարածաշրջանային շփումների աստիճանական կրճատման: Այդ համագործակցության ակտիվության գագաթնակետին ստեղծված այնպիսի կառույցներ, ինչպիսիք էին «Կովկասյան ոչ կառավարական կազմակերպությունների ֆորումը» եւ լրագրողների «Հարավային Կովկաս» ասոցիացիան, այդպես էլ չկարողացան կյանքի կոչել ինտեգրման իրենց հավակնոտ ծրագրերը:

Իհարկե, սահմանափակ չափերով եւ առանց փոխադարձ այցերի՝ ադրբեջանական եւ հայկական հասարակական կազմակերպությունների համատեղ նախագծերը շարունակվում էին: Գոյություն ունեցող կապերի պահպանմանն ու «թշնամու կերպարի» ձեւավորման ուժեղացած միտումի հակազդմանն ուղղված աշխատանքը մասնավորապես բնորոշ էր Երեւանի եւ Բաքվի մամուլի ակումբների, ինչպես նաեւ Ադրբեջանի լրագրողների «Ենի Նեսիլ» («Նոր սերունդ») միության համագործակցությանը: Բացի Հարավային Կովկասի երեք երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ 1990-ականներին ավանդական դարձած ձեւաչափից, այս կազմակերպությունները հետաքրքիր են համարել նաեւ երկկողմ հարաբերությունների դիտարկումը ավելի լայն համատեքստում՝ իրենց նախաձեռնություններում ներառելով ներկայացուցիչներ ոչ միայն Վրաստանից, այլ նաեւ Հարավային Կովկասի չճանաչված կազմավորումներից եւ Թուրքիայից: Մասնավորապես, Ստեփանակերտի մամուլի ակումբն այս նախագծերում հանդես է եկել որպես ակտիվ գործընկեր:
2001 թվականից հետո տարածաշրջանային համագործակցությունում գնալով ավելի մեծացավ հետազոտական բաղադրիչը, ինչը հեռավար ձեւաչափով

աշխատելու հնարավորություն էր տալիս: Այս մասին վկայում են նաեւ հրապարակումների վերնագրերը. օրինակ՝ «Հարավային Կովկասի երկրների իրադարձությունների որակյալ լուսաբանումը զանգվածային լրատվամիջոցներում՝ որպես տարածաշրջանային խնդիրների հաղթահարման գործոն» եւ «Ղարաբաղյան հակամարտությունը Հայաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի ՁԼՄ-ների եւ հանրային կարծիքի հայելում»: Այս շրջանում Երեւանի մամուլի ակումբը, Բաքվի մամուլի ակումբը եւ Ադրբեջանի լրագրողների «Ենի Նեսիլ» միությունը զգալի աջակցություն էին ստանում Բաց հասարակության ինստիտուտի (Open Society Institute) ՁԼՄ-ների ցանցային ծրագրից (OSI network media program):

2014 թվականին հատկապես արդիական դարձած քարոզչության թեման Ադրբեջանից, Հայաստանից եւ Վրաստանից մի խումբ մեդիա փորձագետների հուշեց՝ «Դոյչե Վելլե» ակադեմիայի աջակցությամբ իրականացնել մի հետազոտություն, նվիրված Հարավային Կովկասի երկրներում տեղեկատվական պատերազմների վարման մեթոդներին: Նմանատիպ նախագծերում ադրբեջանցի եւ հայ գործընկերները մասնակցել են նաեւ Արեւելյան գործընկերության վեց երկրների ձեւաչափով: Ավելի վաղ՝ 2008–2013 թվականներին, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից իրականացվող ավելի լայնածավալ երկկողմ ծրագրի շրջանակում, Երեւանի մամուլի ակումբը եւ «Ենի Նեսիլը» համատեղ աշխատում էին այսպես կոչված «Ատելության խոսքի բառարանի» վրա: Այն ներառում էր ոչ միայն հայաստանյան եւ ադրբեջանական մամուլում օգտագործվող բացասական կարծրատիպերի մի ամբողջ շարք, այլեւ առաջարկություններ՝ թե ինչպես, առանց ասելիքի իմաստը կորցնելու, խուսափել այնպիսի ձեւակերպումներից, որոնք զայրացնում են «ճակատի» մյուս կողմում գտնվող լսարանին: Եվ թեպետ երկու երկրների լրագրողական որոշ շրջանակներ հետաքրքրված էին այս հետազոտության արդյունքները գործնականում կիրառելու հարցում, սակայն տեղեկատվական հակամարտության սրացման ընդհանուր միտումը անհամեմատ ավելի զորեղ գտնվեց:

2005 թվականից սկսած, չնայած կուտակվող դժվարություններին, ակտիվ էր համագործակցությունը հայաստանյան «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի եւ Ադրբեջանի Խաղաղության եւ ժողովրդավարության ինստիտուտի միջեւ, որոնք, համապատասխանաբար, ղեկավարում էին Լաուրա Բաղդասարյանը եւ հայտնի իրավապաշտպաններ ու փորձագետներ Լեյլա եւ Արիֆ Յունուսովները: 2012 թվականին նրանք ստեղծեցին համատեղ վեբկայք, որը նվիրված էր հայ-ադրբեջանական հարաբերությունների տարբեր ասպեկտների ուսումնասիրմանը: Յունուսովների ձերբակալությունից եւ արտագաղթից հետո 2016 թվականին այս համագործակցությունը ժամանակավորապես ընդհատվեց: Սակայն երկու տարի անց այս գործընկերների կողմից մոդերացվող «Ղարաբաղյան հակամարտությունը Հայաստանի եւ Ադրբեջանի քաղաքական գործընթացների համատեքստում» առցանց քննարկումները վերսկսվեցին եւ շարունակվեցին եւս մեկ տարի:

Երկկողմ համագործակցությանը մշտապես ուղեկցող ռիսկի գործոնը, ադրբեջանցի քաղաքական գործիչների, փորձագետների եւ լրագրողների նկատմամբ քրեական հետապնդումները, ինչպես նաեւ 2000-ականների սկզբից ի վեր հայերի եւ ադրբեջանցիների՝ միմյանց այցելելու համար ստեղծված դժվարություններն ազդում են տարածաշրջանային տարբեր ֆորումներում նրանց ներկայացվածության վրա: Այսպես, հայ քաղաքական գործիչ Դավիթ

Շահնազարյանի եւ գերմանական Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի նախաձեռնությամբ 2002 թվականից ի վեր Հայաստանում անցկացվող տարածաշրջանային հարցերին նվիրված ամենամյա համաժողովներին մշտապես մասնակցում էր ադրբեջանցի լրագրող Ռաուֆ Միրկադիրովը: Սակայն 2014 թվականին վերջինիս ձերբակալությունը, դատապարտումը եւ հետագա արտագաղթը դարձան պատճառներից մեկը, որ հաջորդ մի քանի տարիներին Ադրբեջանի ներկայացուցիչները դադարեն մասնակցել այդ միջոցառումներին: Ճիշտ է, 2019 թվականին ադրբեջանցի փորձագետ Ռաուֆ Ռաջաբովը կարողացավ մասնակցել նմանատիպ համաժողովի, ինչն այդ ժամանակ դրական ազդանշան համարվեց նման նախաձեռնությունների համար:

Մասնավորապես, ենթադրվում էր, որ նոր հնարավորություններ կբացվեն Ալեքսանդր Իսկանդարյանի գլխավորած Կովկասի ինստիտուտի համար: Այս կազմակերպությունը տարիներ շարունակ հանդիպումներ է անցկացրել ադրբեջանցի գիտնականների հետ, պատրաստվել են հրապարակումներ, գրքեր են հրատարակվել Հարավային Կովկասի երկրների քաղաքական եւ սոցիալ-տնտեսական իրավիճակի, ինչպես նաեւ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարների վերաբերյալ: ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Եվրոպայից եւ Վրաստանից բազմաթիվ գիտնականներ իրենց հոդվածներով հանդես են եկել ամենամյա ժողովածուներում, սակայն հայ-ադրբեջանական շփումների սահմանափակումների շրջանում, ստիպված, այդ տարեգրքերը լույս են տեսել առանց ադրբեջանցի վերլուծաբանների հոդվածների: Իսկ 2020 թվականին հակամարտության սրացումը խոչընդոտեց պարբերականի էջեր նրանց վերադարձին:

«Track 2» հարթակում Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ համագործակցության «սառցե դարաշրջանով» պայմանավորված՝ առանձնահատուկ ուշադրության արժանացան երիտասարդական նախաձեռնությունները: Այդօրինակ պայմաններում արդյունավետ համագործակցության հնարավորության բացակայությունը ստիպում էր ապավինել նոր սերնդին՝ նրանց պատրաստելով երկխոսության եւ հակամարտության կարգավորման ուղիների որոնման՝ այն ժամանակների համար, երբ, միգուցե, ավելի բարենպաստ պայմաններ կձեւավորվեին: Մասնավորապես, նման մոտեցման օրինակ էր «Imagine» հակամարտությունների փոխակերպման կենտրոնի նախաձեռնությունը, որն իր գործունեությունը սկսեց 2007 թվականին՝ երկխոսության հարթակ առաջարկելով հայաստանցի եւ ադրբեջանցի ակտիվիստների համար: «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ն եւ նրանց ադրբեջանցի գործընկեր Նազիմ Իբադովը նպատակ ունեին այդ ծրագրի միջոցով երիտասարդների շրջանում զարգացնել ազգայնական ագրեսիվ քարոզչությունից պաշտպանվելու հմտություններ: Մեկ այլ օրինակ. Եվրասիա համագործակցություն հիմնադրամը, երկու երկրների երիտասարդության քիչ թե շատ կանոնավոր հանդիպումներին զուգահեռ, ձգտում էր այդ հանդիպումների մասնակիցների համար նոր մեդիայի միջոցով խաղաղաշինության հարթակ ստեղծել: 2017-2018 թթ. ընթացքում այս հիմնադրամը նախաձեռնել էր նաեւ հակամարտությունների փոխակերպման դպրոցների գործունեությունը Բաքվում եւ Երեւանում: Դա երիտասարդ հայերի եւ ադրբեջանցիների համար նախատեսված ծրագիր էր, որով նախատեսվում էր քննադատական մտածողության սերմանել նրանց մեջ՝ նպաստելով հակամարտության կարգավորման նոր լուծումների որոնմանը:

Հակամարտությունների լուծման թեմային անմիջականորեն անդրադառնալու խոչընդոտները երկխոսության նախաձեռնությունների հեղինակներին դրդեցին դիմել արվեստի լեզվին՝ գեղարվեստական արձակին եւ հուշագրությանը, կինոյին ու վավերագրությանը: 2003 թվականին ոչ կառավարական կազմակերպությունների Կովկասյան ֆորումը մեկ գրքով ներկայացրեց Հարավային Կովկասի գրողների ստեղծագործությունները, որոնց թվում էին նաեւ հայ եւ ադրբեջանցի հեղինակների պատմվածքները: Ժողովածուն ստացավ «Ապրելու ժամանակը» վերնագիրը եւ դարձավ յուրահատուկ միասնական հարթակ տարածաշրջանի գրողների երկխոսության համար: 2006-2007 թթ. ընթացքում Բաքվի եւ Երեւանի մամուլի ակումբների նախաձեռնությամբ ստեղծված «LitLab» համատեղ կայքում ներկայացվեցին երկու երկրների ժամանակակից գրողների գործերի թարգմանությունները ռուսերեն, անգլերեն եւ ազգային լեզուներով՝ նպատակ ունենալով փոխադարձ մեկուսացման պայմաններում խթանել հայերի եւ ադրբեջանցիների միջեւ փոխըմբռնումը:

Բավական մեծ ժողովրդականություն վայելեց առաջնագծում ծառայած լրագրողների հուշագրությունների «Լրագրողները Ղարաբաղյան պատերազմում» գիրքը, որը լույս տեսավ 2002 թվականին՝ Էքստրեմալ լրագրության կենտրոնի աջակցությամբ: Դրանք ոչ միայն կենդանի վկայություններ էին, այլ նաեւ մասնագիտական վարքի տեսանկյունից չափազանց ուսանելի պատմություններ պատերազմը լուսաբանող լրագրողների համար:

«Կինոերկխոսություններ» շարքի կարճամետրաժ ֆիլմերը ներկայացնում էին Ղարաբաղյան հակամարտության մարդկային կողմը, պատմում ռազմագերիների եւ փախստականների փորձառության, խառը ամուսնությունների ճակատագրերի եւ Ինտերնետում ընթացող «ռազմախաղերի» մասին... 2007-2013 թվականներին Ադրբեջանի եւ Հայաստանի «ինտերնյուսցիները», համագործակցելով բրիտանական «Հաշտեցման ռեսուրսներ» կազմակերպության հետ, նկարահանեցին այդ շարքի մոտ 30 ֆիլմ, որոնք նախատեսված էին հանրային ցուցադրումների համար:

2010 թվականին Հայաստանում «ադրբեջանական ֆիլմերի փառատոն» խորագիրը կրող միջոցառումների անցկացման նախաձեռնողները հայտարարում էին, որ իրենց նպատակը ուղիղ, անմիջական շփման համար տարածք ստեղծելն էր եւ դիմակայելը ծավալվող քարոզչությանը, որն, ըստ նրանց, սնվում էր «հումանիստական գաղափարների այլասերման եւ բանականության մերժման» հաշվին: Սակայն հայ հասարակության եւ լրատվամիջոցների արձագանքը հիմնականում բացասական էր, հնչում էին նաեւ կարծիքներ, որ նման փառատոնը կարող է երկու երկրների քաղաքացիների միջեւ վստահության վերականգնմանը նպաստող միջոցառում դառնալ միայն այն դեպքում, եթե իրականացվի նաեւ Ադրբեջանում: Ցուցադրություններին մերժում տրվեց Երեւանի երեք հասցեներում, իսկ Գյումրիում եւ Վանաձորում նախատեսված կինոդիտումները բախվեցին սկանդալային արձագանքի եւ չեղարկվեցին:

Այս նախադեպը լուրջ հարց բարձրացրեց՝ որքանո՞վ են «շոկային» խաղաղարար մեթոդներն արդյունավետ այնպիսի իրավիճակներում, երբ սրված հակամարտության մեջ գտնվող երկրների հասարակությունների զգալի մասը հակված չէ առաջին քայլն անելու հաշտեցման ուղղությամբ: Ամեն դեպքում, հենց այդ «սառցե շրջանում», երբ Հայաստանում քաղաքացիական հասարակության գործունեության սահմանափակումները զգալիորեն ավելի քիչ էին, քան հարեւան

երկրում, միակողմանի նախաձեռնություններից առաջացած «շոկը» հանգեցրեց նրան, որ բազմաթիվ ՀԿ-ներ կորցրեցին հետաքրքրությունը ադրբեջանցի գործընկերների հետ երկխոսության նկատմամբ: Սակայն, ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ այս տրամադրությունների փոփոխությունը պայմանավորված էր ոչ այնքան առանձին անհաջող նախաձեռնությունների ձախողումներով, որքան Բաքվի եւ Երեւանի միջեւ խորացող հակասությունների պայմաններում խաղաղ լուծումների փնտրտուքի անհեռանկարային լինելու մասին տարածված համոզմամբ:

Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ «ֆուտբոլային դիվանագիտության» (2008-2009 թթ.) ձախողումը նույնպես որոշակի ազդեցություն ունեցավ այս տեսակետի զարգացման վրա: Հայ հանրության համար դա ծառայեց որպես փաստարկ՝ հարեւան թյուրքական պետությունների հետ պատմական հակասությունները հաղթահարելու անհնարինության վերաբերյալ: Իսկ ադրբեջանական հանրության համար դա Հայաստանի հետ հաշտեցման ցանկացած քայլի հետ կապված ռիսկերի վկայություն էր: Մի ավելորդ անգամ հաստատվեց հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հակասությունների փոխկապակցված բնույթը. մասնավորապես, հայերի ցեղասպանության թեմայի մերժումն Ադրբեջանում շատ ավելի ագրեսիվ կերպով էր արտահայտվում, քան՝ հենց Թուրքիայում: Բացի այդ, Անկարան դեռեւս 1993 թվականին Հայաստանի հետ սահմանը փակելու պահից ի վեր, հայ-թուրքական հարաբերությունների նորմալացումը պայմանավորել էր Ղարաբաղի հարցում Երեւանի միակողմանի զիջումներով: Եռանկյունու բոլոր կողմերի դիրքորոշումների կարծրացումը ոչ միայն նվազեցրեց եռակողմ երկխոսության գրավչությունը, որի նկատմամբ Բաքվի եւ Երեւանի մամուլի ակումբները հատուկ հետաքրքրություն էին ցուցաբերել 2000 թվականից ի վեր, այլեւ մեծացրեց միմյանց նկատմամբ երկու հասարակությունների զգուշավորությունը, որը շարունակվեց աճել մինչեւ 2023 թվականի վերջը:

Գաղափարները, որոնք կարող էին հանրային հավանության արժանանալ 1990-ականների վերջերին, ընդամենը 10-15 տարի անց մեծամասնության համար դարձան անընդունելի: Կովկասի խաղաղապահ նախաձեռնությունների կենտրոնի տնօրեն եւ վերոնշյալ կինոփառատոնի կազմակերպիչ Գեորգի Վանյանը, ադրբեջանցի քաղաքագետ Զարդուշտ Ալիզադեի հետ միասին, համահեղինակեց նաեւ 2012-2015 թվականների քաղաքացիական նախաձեռնությունը՝ «Թեքալիի գործընթացը» (անվանակոչվել էր Վրաստանի ադրբեջանաբնակ գյուղի անունով): Այն նախատեսում էր Հարավային Կովկասի տարածաշրջանի քաղաքական եւ հասարակական հայտնի գործիչների մասնակցությամբ տարբեր հարցերի վերաբերյալ «լսումներ»: Դրանց լսարանը ներառում էր նաեւ Հարավային Կովկասի երեք երկրների սահմանամերձ շրջանների բնակիչներին: Սակայն «Թեքալիի գործընթացի» նկատմամբ արձագանքը ոչ միայն Ադրբեջանում եւ Հայաստանում, այլ նաեւ Վրաստանում՝ միանշանակ չէր:

2018 թվականի սեպտեմբերին Վանյանը եւ Ալի-զադեն ադրբեջանական եւ հայկական հանրություններին կոչ արեցին հսկայական միջոցներ չծախսել սպառազինությունների մրցավազքի վրա, այլ կենտրոնանալ խաղաղության որոնման եւ փոխադարձ հարգանքի ու փոխըմբռնման ավանդույթների վերականգնման վրա: Սա նմանատիպ առաջին կոչը չէր: 2010 թվականին «Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման անկախ քաղաքացիական Մինսկի գործընթաց» նախաձեռնության շրջանակներում Ադրբեջանի նախագահի

նախկին օգնական Էլդար Նամազովը եւ ՀՀ նախագահի հատուկ հանձնարարություններով նախկին դեսպան Դավիթ Շահնազարյանը հայտարարություն տարածեցին հռչակագրի ստորագրման վերաբերյալ, որում, ի թիվս այլ բաների, նրանք երկու պետությունների ղեկավարներին կոչ արեցին «վերջ տալ ռազմատենչ հռետորաբանությանը, քաղաքական եւ տեղեկատվական արշավներին, որոնք ուղղված են հակամարտության սրմանը, անհապաղ քայլեր ձեռնարկել հրադադարի ամրապնդման եւ զինված միջադեպերի կանխարգելման համար, ինչպես նաեւ ապահովել դիպուկահարների անհապաղ դուրսբերումը շփման գծից»: Այդուհանդերձ, պետք է ընդունել, որ այս նախաձեռնությունները նկատելի ազդեցություն չունեցան կարգավորման գործընթացի վրա, քանի որ հակասում էին պաշտոնական մակարդակով բանակցություններում գերիշխող միտումներին:

Խոսելով հենց «Track 2» հարթակում ի հայտ եկած միտումների մասին, կարելի է հատկապես առանձնացնել դրանցից մի քանիսը: Եթե մինչեւ 2000-ականների սկիզբը տեղական կազմակերպությունների միջեւ ուղղակի համագործակցության ակտիվացում էր նկատվում, ապա նրանց գործունեության հնարավորությունների սահմանափակումներից հետո որոշիչ դերակատարումը կրկին վերադարձավ արտաքին միջնորդներին**:** 2003–2009 թվականներին Ղարաբաղյան հակամարտության կարգավորման «Track 2» հարթակում առանցքային դերակատար դարձավ միջազգային ՀԿ-ների համագործակցային հարթակը (*Consortium Initiative*), որն իր գործունեությունն իրականացնում էր բրիտանական կառավարության ֆինանսական աջակցությամբ: Իսկ 2010 թվականից սկսած՝ նախաձեռնությունն իր վրա վերցրեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման եվրոպական գործընկերությունը (EPNK), որն ընդգրկում էր մի քանի կազմակերպություն եւ գործում էր Եվրամիության աջակցությամբ: Երկու նախաձեռնությունների հիմնական նպատակը հակամարտող հասարակություններում բարենպաստ մթնոլորտի ձեւավորումն էր, եւ հենց այդ շրջանակներում էլ հայաստանյան եւ ադրբեջանական մի շարք կազմակերպություններ իրականացրեցին վերը հիշատակված նախագծերից մի քանիսը: Առաջ անցնելով՝ ասենք, որ այս միտումն ամրապնդվեց հաջորդող բոլոր տարիներին է. մասնավորապես, EU4Peace (ԵՄ-ն հանուն խաղաղության) ծրագրի մի քանի փուլեր առաջատար դեր են խաղացել Հարավային Կովկասում իրականացվող խաղաղաշինական գործընթացներում:

Ղարաբաղյան հակամարտության նկարագրության եւ իմաստավորման ուղղությամբ ձեռնարկվել են նաեւ խոշորածավալ նախագծեր: Ամենահայտնիներն են Քարնեգի հիմնադրամի Եվրոպայի եւ Եվրասիայի ծրագրի հետազոտող Թոմաս դե Վաալի **«**Սեւ այգի. Հայաստանը եւ Ադրբեջանը պատերազմի եւ խաղաղության միջեւ» (2003) գիրքը եւ «Անի» հայկական հետազոտությունների կենտրոնի համակարգող Թաթուլ Հակոբյանի «Ղարաբաղյան օրագիր. կանաչ եւ սեւ» (2008) աշխատությունը: Պրոբլեմը խորությամբ հասկանալու հարցում որոշակի ներդրում են ունեցել քաղաքական վերլուծաբաններ Ռասիմ Մուսաբեկովի եւ Ստեփան Գրիգորյանի**,** լրագրողներ Արիֆ Ալիեւի եւ Բորիս Նավասարդյանի մասնակցությամբ, ժանրային յուրօրինակ ներկայացմամբ՝ «Ղարաբաղյան հակամարտություն. հասկանալ միմյանց» վերնագրով համատեղ հրատարակությունը, Ալի Աբասովի եւ Հարություն Խաչատրյանի «Ղարաբաղյան հակամարտության կարգավորման տարբերակներ. գաղափարներ եւ իրականություն» վերնագրով բրոշյուրը, «Թուրան» լրատվական գործակալության տնօրեն Մեհման Ալիեւի, Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի

ղեկավար Ռիչարդ Կիրակոսյանի, ինչպես նաեւ Մեծ Բրիտանիայի «Հաշտեցման ռեսուրսներ» կազմակերպության կովկասյան ծրագրի պատասխանատու Լոուրենս Բրոերսի եւ մի շարք այլ փորձագետների վերլուծական աշխատանքները:

Հենց «սառցե դարաշրջանում» էր, որ ադրբեջանական եւ հայկական հասարակություններում չափազանց հազվադեպ դարձան հակամարտության հարցում «ապակառուցողական քաղաքականության» համար սեփական իշխանություններին քննադատող ձայները: Ավելի լսելի էր ազգային շահերն անբավարար հետեւողականությամբ պաշտպանելու համար քննադատությունը: Սա պայմանավորված էր ոչ այնքան վերեւից իջեցված սահմանափակումներով, որքան հասարակական տրամադրություններով, որոնք ավելի ու ավելի պակաս ընկալունակ էին դառնում խաղաղարար գաղափարների նկատմամբ: Երկու երկրների հասարակությունները մեծամասամբ անտարբեր էին նաեւ այն համաքաղաքացիների, այդ թվում՝ հայտնի դեմքերի հանդեպ, որոնք փորձում էին հակամարտության արմատները փնտրել սեփական հասարակության եւ ղեկավարության ներսում, այլ ոչ թե՝ հակառակորդների: Այդ առումով ամենաբնութագրական օրինակը՝ 1990 թ. Բաքվում տեղի ունեցած իրադարձություններին նվիրված «Քարե երազներ» վեպի (2012 թ.) հեղինակ Աքրամ Այլիսլիի նկատմամբ Ադրբեջանում ծայրահեղ բացասական վերաբերմունքն էր: Հայաստանում էլ Ղարաբաղյան հակամարտության հարցում Հայաստանի կառավարության դիրքորոշման քննադատության համար վերոնշյալ Գեորգի Վանյանը եւ Հելսինկյան ասոցիացիայի նախագահ Միքայել Դանիելյանն էին ատելության թիրախ դարձել: Ըստ որում, հակամարտության կարգավորման վերաբերյալ այլընտրանքային տեսակետները հաճախ ընկալվում էին որպես օտարերկրյա դոնորներից կախվածության հետեւանք: Նման տրամադրություններ հատկապես ակտիվորեն տարածում էին իշխանամետ լրատվամիջոցները:

Իրական երկխոսությանն ուղղված անկախ նախաձեռնությունների ծայրահեղ պակասի պայմաններում, նրանց տեղը ժամանակ առ ժամանակ լցվում էր զուտ ցուցադրական, քարոզչական ուղղվածությամբ նախագծերով: 2007 եւ 2009 թվականներին, Ռուսաստանի մշակույթի նախկին նախարար Միխայիլ Շվիդկոյի եւ Ռուսաստանի Դաշնությունում Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության դեսպաններ, կոմպոզիտորներ Փոլադ Բյուլբյուլ օղլիի եւ Արմեն Սմբատյանի նախաձեռնությամբ ադրբեջանական եւ հայկական մտավորականության հանրաճանաչ ներկայացուցիչները մասնակցեցին համատեղ ուղեւորությունների եւ բարձր մակարդակի հանդիպումների Բաքվում, Երեւանում եւ Ստեփանակերտում: 2016 թվականին ի հայտ եկավ Բաքվի խաղաղության հարթակը, սակայն դրա՝ իբրեւ թե հայկական կողմի մասնակիցների ձեռքով վարկաբեկվելուց հետո, 2017 թվականին այն փոխարինվեց Թբիլիսիում գրանցված՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության քաղաքացիական հարթակով: Հակառակ հայտարարված խաղաղապահ մտադրությունների՝ այս նախաձեռնությունները միայն սրեցին հակամարտության կողմերի միջեւ հարաբերությունները, ինչի մասին վկայում են բազմաթիվ լրատվամիջոցների հրապարակումները: Եթե մոսկովյան հովանավորությամբ նախաձեռնության դեպքում ակնհայտ էր ձեւականությունը եւ հստակ արդյունքի բացակայությունը, ապա Բաքվի եւ Թբիլիսիի հարթակները շատ ավելի կոնկրետ խնդիր էին լուծում՝ իրական խաղաղարար գործընթացի նենգափոխում եւ իմիտացիա:

Ժողովրդական դիվանագիտության «սառցե դարաշրջանին» բնորոշ մեկ այլ միտում էլ դարձավ կարգավորման գործընթացում հոգեւոր առաջնորդների ներգրավումը: 2010 թվականի ապրիլին Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսը առաջին անգամ այցելեց Բաքու՝ մասնակցելու համաշխարհային կրոնական առաջնորդների գագաթնաժողովին, իսկ 2011 թ. նոյեմբերին Կովկասի մուսուլմանների վարչության առաջնորդ Ալլահշուքյուր Փաշազադեն այցելեց Երեւան՝ մասնակցելու Միջեկեղեցական խորհրդի նիստին:

Խաղաղարար գործընթացի առաջին քայլերից ի վեր՝ կանանց կազմակերպությունների մակարդակով երկխոսությունը դարձավ դրա կարեւորագույն բաղադրիչներից մեկը եւ շարունակում էր այդպիսին մնալ, մասնավորապես «Եվրոպական գործընկերություն՝ հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» ծրագրի շրջանակներում: Հայաստանում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունից» հետո այս ձեւաչափը կարող էր բարձրանալ նոր մակարդակի, եթե դրանում ներգրավվեին Իլհամ Ալիեւի եւ Նիկոլ Փաշինյանի տիկնայք՝ Մեհրիբան Ալիեւան եւ Աննա Հակոբյանը: Երկուսն էլ հետաքրքրվածություն էին ցուցաբերել, բայց մինչեւ 2020 թվականի 44-օրյա պատերազմի ավարտը փոխբացառող քայլեր էին ձեռնարկում: 2019 թ. ապրիլի 3-ին, ադրբեջանցի զինծառայողների հետ հանդիպմանը Մեհրիբան Ալիեւան հայտարարեց. «Լեռնային Ղարաբաղի յուրաքանչյուր գյուղում, յուրաքանչյուր քաղաքում ծածանվելու է Ադրբեջանի դրոշը»: Դա, բնականաբար, սուր արձագանք գտավ Հայաստանում: Իսկ Աննա Հակոբյանը «Կանայք հանուն խաղաղության» նախաձեռնության շրջանակում ռուսաստանցի կին հանրային գործիչների պատվիրակություն ուղարկեց Լեռնային Ղարաբաղ, ինչն էլ իր հերթին ծայրահեղ դժգոհություն առաջացրեց Ադրբեջանում: Մինչդեռ, ակտիվ հասարակական դիրք ունեցող այս երկու կին առաջնորդների ավելի փոխհամաձայնեցված գործողությունները էսկալացիայի ռիսկերը նվազեցնելու մեծ պոտենցիալ ունեին: Հետո արդեն, երբ տեղի ունեցավ անդառնալին՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմը, որը մոտ տասը հազար զինծառայողների ու խաղաղ բնակիչների կյանք խլեց, այդ օրերին Աննա Հակոբյանը 13 կանանցից բաղկացած «Էրատո» ջոկատ էր կազմել ռազմական գործողություններին մասնակցելու համար: Միայն 2025 թ. օգոստոսի 8-ին՝ Վաշինգտոնյան համաձայնագրերի ստորագրումից հետո, Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների տիկնայք խաղաղարար ուղերձով հանդես գալու առաջին համատեղ փորձն արեցին, որն արտահայտվեց Չինաստանում Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) գագաթնաժողովի եւ Երկրորդ համաշխարհային պատերազմի հաղթանակի տոնակատարության շրջանակում նրանց հանդիպման լուսանկարներով:

ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

«Սառցե դարաշրջանին» հաջորդած փուլերը նպատակահարմար է դիտարկել միասին, քանի որ դրանցում արտահայտված միտումները տրամաբանորեն փոխկապակցված են: Ընդ որում, այդ կապը սկսել էր երեւան գալ դեռեւս 2016 թվականից, ինչը վկայվեց ապրիլյան քառօրյա պատերազմով: Եթե մինչ այդ «Track 2» ձեւաչափի սառեցման հիմնական պատճառը Ադրբեջանում լրատվամիջոցների եւ ՔՀԿ-ների գործունեության սահմանափակումներն էին,

ապա 2016-ի ապրիլից հետո հենց «ժողովրդական դիվանագիտության» ներկայացուցիչներն իրենք՝ որոշ բացառություններով, սկսեցին իրենց ընկալել առավելապես որպես տեղեկատվական եւ հռետորական պայքարի գործիք: Ո՛չ փորձագետները, ո՛չ լրագրողները չկարողացան համախմբվել եւ խորքային վերլուծության ենթարկել երկու ռազմական բռնկումները՝ 2016-ի ապրիլի եւ 2020 թվականի հուլիսի ռազմական էսկալացիաները, որոնք, փաստորեն, դարձան լայնածավալ պատերազմի անխուսափելի նախադրյալ: «Թավշյա» հեղափոխությունից հետո Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների մակարդակով վերսկսված բանակցություններով եւ 2019 թ. մայիսին հրադադարի 25-ամյակի կապակցությամբ խաղաղ կարգավորմանն իրենց փոխադարձ հավատարմության հավաստիացումներով արտահայտված կարճատեւ «ընդմիջումն» ավարտվեց Նիկոլ Փաշինյանի հայտնի հայտարարությամբ՝ «Արցախը Հայաստան է, եւ վե՛րջ», որը նա հնչեցրեց 2019 թ. օգոստոսի 5-ին՝ Լեռնային Ղարաբաղում անցկացվող Համահայկական խաղերի բացման արարողության ժամանակ: Նույնիսկ 2019 թվականի դեկտեմբերին, երկարատեւ ընդմիջումից հետո, ԵԱՀԿ-ի կողմից կազմակերպված լրագրողների փոխայցելությունը չկարողացավ կանխել բոլոր մակարդակներում, այդ թվում՝ «Track 2» հարթակում իրավիճակի վերածվելն ավելի ու ավելի մեծ առճակատման: Հենց այս հակադրման ոգին էր բնորոշ փորձագիտական համայնքի, ՀԿ-ների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների գործունեությանը 2019 թվականի կեսերից մինչեւ 2023 թվականի վերջը, երբ կողմերը մրցակցում էին, թե ով կարող է «ամենալավը» դատապարտել մյուսին միջազգային իրավունքը խախտելու, բռնությունների միջոցով խնդիրները լուծելու եւ ատելություն ու թշնամանք սերմանելու համար: Նման մթնոլորտը, բնականաբար, բացառում էր ժողովրդական դիվանագիտության որեւէ դերակատարում ոչ միայն 44-օրյա պատերազմի, այլեւ 2021-2022 թվականների սահմանային սրացումները եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումը կանխարգելելու հարցում, ինչն ավարտվեց Ադրբեջանի ռազմական գործողությամբ եւ տարածաշրջանից փաստորեն ամբողջ հայ բնակչության զանգվածային տեղահանությամբ:

«Սառցե դարաշրջանի» ընթացքում ստեղծված իրավիճակի վատթարացումը մի շարք հայկական կազմակերպությունների դրդեց դուրս գալ երկխոսության գործընթացից՝ չնայած խաղաղության կառուցման նկատմամբ իրենց շարունակական հետաքրքրվածությանը: Որոշ կազմակերպությունների ադրբեջանցի գործընկերներ հայտնվեցին բարդ կացության մեջ, իսկ նրանց մի մասն անգամ ստիպված եղավ լքել երկիրը: Մասնավորապես իրավապաշտպան շրջանակներում տարածված դարձավ այն համոզումը, որ հարեւան երկրում այլեւս գրեթե չկան այնպիսի դերակատարներ, որոնք կհամարձակվեն պաշտպանել մարդու իրավունքները: Այնուամենայնիվ, վերջին 20 տարիների համագործակցության փորձը հնարավորություն է տալիս այս կազմակերպությունները դիտարկել որպես «ոսկե պահուստ», եթե փոխվեն երկխոսության նախաձեռնությունների համար անհրաժեշտ պայմանները: «Առավելագույն դիմակայության» ժամանակաշրջանը (2019-2023 թթ.), որը ներառում էր ոչ միայն տարբեր մասշտաբի ռազմական բախումներ, այլ նաեւ համավարակ, բնութագրվեց խաղաղաշինությամբ զբաղվող կազմակերպությունների կողմից նոր աշխատանքային մեթոդների ներդրմամբ: Շատ կազմակերպություններ, որոշ դեպքերում, համատեղ բաղադրիչից անցան զուգահեռ բաղադրիչի, մասնավորապես 44-օրյա պատերազմի ժամանակ: Այսպես, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը եւ նրա գործընկերները, ամեն մեկն իր հերթին, աշխատեցին պատերազմի տեսանյութերի արխիվի եւ

հակամարտությունների լրագրության ուսուցման առցանց հարթակի ստեղծման ուղղությամբ: Զգալի ջանքեր գործադրվեցին ռազմական թղթակիցների անվտանգությունն ապահովելու համար, այդ թվում՝ նրանց տրամադրելով զրահաբաճկոններ եւ սաղավարտներ:

2020 թվականի վերջից ի վեր, բազմաթիվ կազմակերպություններ, որոնց թվում էին Արմավիրի զարգացման կենտրոնը, Մարտունու կանանց համայնքային խորհուրդը, Գորիսի մամուլի ակումբը եւ ուրիշներ, ստիպված են եղել վերաուղղելու իրենց գործունեությունը՝ Լեռնային Ղարաբաղից փախստականներին օգնելու եւ նրանց Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական եւ մշակութային միջավայրում ինտեգրելու վրա: «Ստեփանակերտ» մեդիա ակումբը (նախկինում՝ Ստեփանակերտի մամուլի ակումբ) հրատարակել է «Արցախ. շրջափակումն ու բռնատեղահանությունը՝ մարդկային պատմություններում» գիրքը, որն անձնական պատմությունների միջոցով պատկերել է արցախցիների ողբերգությունը: 2023 թվականի սեպտեմբերին արցախցիների զանգվածային արտագաղթից հետո, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը, Հանրային լրագրության ակումբը եւ Երեւանի մամուլի ակումբը մի շարք ծրագրեր են իրականացրել արցախցի լրագրողներին մասնագիտորեն ինտեգրելու, վերապատրաստելու եւ աշխատանքի տեղավորելու համար:

Հայաստանի եւ Ադրբեջանի լրագրողների առջեւ ծառացած մարտահրավերները նոր արդիականություն են հաղորդել JAMnews տարածաշրջանային հարավկովկասյան պարբերականին, որը հիմնադրվել է Թբիլիսիում, 2015 թվականին: Պարբերականը միաժամանակ երկու նպատակ է հետապնդում. նախ՝ ներկայացնել տարածաշրջանի երկրների պաշտոնական տեսակետները քաղաքական հարցերի լայն շրջանակի վերաբերյալ, երկրորդ՝ ծանոթացնել միմյանց՝ մարդկային պատմությունների միջոցով ցույց տալով, թե որքան նման են Հարավային Կովկասի ժողովուրդներն իրենց սովորույթներով, հույզերով եւ ողբերգություններով: Միեւնույն ժամանակ, Վրաստանում օտարերկրյա դոնորներից աջակցություն ստացող տեղական կազմակերպությունների վրա դրված սահմանափակումները լուրջ մարտահրավերներ են հանդիսանում JAMnews-ի հետագա աշխատանքի համար:

Փոփոխություններն ազդել են նաեւ հայկական եւ ադրբեջանական բնապահպանական կազմակերպությունների փոխգործակցության վրա: 44-օրյա պատերազմից հետո դրանցից մի քանիսը, մասնավորապես «Էկոլուրը», խորը տարաձայնությունների եւ Ադրբեջանի կողմից բնապահպանական հարցերը հակամարտության նպատակներին ծառայեցնելու պատճառով անցել են երկկողմ ձեւաչափերով աշխատանքի՝ Հայաստան-Վրաստան եւ Ադրբեջան-Վրաստան: Նույնիսկ այն դեպքերում, երբ համագործակցությունն այնուամենայնիվ ստացվում է, նրանք նախընտրում են դրա մասին հրապարակայնորեն չխոսել: Այնուամենայնիվ, քաղաքական համատեքստի ներկայիս փոփոխությունը թույլ է տալիս ընդունել, որ բնապահպանական խնդիրների լուծումը պահանջում է առնվազն տարածաշրջանային ծածկույթ, եւ որ բնությունն ինքնին թելադրում է միջպետական սահմաններից այն կողմ անցնելու անհրաժեշտությունը: Հայկական «Խազեր» կազմակերպությանը հաջողվել է համագործակցություն հաստատել իր ադրբեջանցի գործընկերոջ հետ՝ EU4Dialogue-ի շրջանակներում ձեւավորված «Խոցելիություն» ենթախմբում:

Այն իրավիճակում, երբ խաղաղաշինական քաղաքացիական ակտիվիզմն ականհայտ դժվարություններ է ապրում, աճում է փորձագիտական հանրության ներկայացուցիչների միջեւ շփումների եւ քաղաքական վերլուծությունների պահանջարկը: Ֆինլանդիայի «Ճգնաժամերի կառավարման նախաձեռնություն» (Conflict Management Initiative) կազմակերպությունը (Մարտի Ահտիսաարիի խաղաղության հիմնադրամ) եւ «Լինքս Եվրոպան» (Links Europe) ակտիվորեն աշխատում են այս ոլորտում: Նրանց ծրագրերի շրջանակներում փորձագիտական հանդիպումներ են կազմակերպվել: Մասնավորապես, «Links Europe» կազմակերպությունը 2022 թ. ապրիլին հրապարակեց զեկույց հետեւյալ վերնագրով. «Հարավային Կովկասը՝ պատերազմից դեպի խաղաղություն. 30 քայլ՝ մինչեւ 2030 թվականը Հայաստանի ու Ադրբեջանի, հայերի եւ ադրբեջանցիների միջեւ փոխադարձ վստահության հիման վրա ապագան կառուցելու համար» (The South Caucasus from war to peace: 30 measures between now and 2030 Armenia and Azerbaijan, Armenians and Azerbaijanis, need to build the future based on mutual trust and confidence): Միեւնույն ժամանակ, միշտ չէ, որ նյութական արդյունքների հասնելու նպատակ էր դրվում, իսկ ոչ նյութական արդյունքների առումով՝ պետական ու քաղաքական գործիչների, քաղաքագետների եւ կոնֆլիկտաբանների միջեւ շփման եւս մի հարթակ ստեղծվեց: Կովկասի ինստիտուտը, արտասահմանյան գործընկերների աջակցությամբ, շարունակում է փակ հանդիպումներ կազմակերպել թե՛ առցանց, թե՛ առկա ձեւաչափերով: Դրանց իրականացման համար ինստիտուտը համագործակցել է Ադրբեջանի միջազգային հարաբերությունների վերլուծության կենտրոնի հետ: Ավելի ու ավելի տեսանելի դեր է ստանձնում Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոնը**,** որը գլխավորում է Արեգ Քոչինյանը: Կենտրոնի ներկայացուցիչները կազմակերպում եւ ակտիվորեն մասնակցում են թե՛ գործնական թեմաներով երկխոսությունների, թե՛ տեսական հարցերի քննարկումների ու բանավեճերի, այդ թվում՝ մեդիա հարթակներում: «Track 1.5» եւ «Track 2» մակարդակներում փորձագետները յուրացնում են խաղաղություն կառուցելու տարբեր մեթոդաբանական գործիքակազմեր: Վերջին տարիներին երկխոսության նախաձեռնություններին միացել է նաեւ «Կանայք եւ գլոբալ անվտանգության ճարտարապետությունը» վերլուծական կենտրոնը, որը ղեկավարում է Արմինե Մարգարյանը: 2024–2025 թթ. կենտրոնը համապարփակ անվտանգության եւ դիմադրողականության խնդիրներին *(*Comprehensive Security and Resilience*)*, նվիրված միջազգային կոնֆերանսներ է կազմակերպել, որոնց օրակարգում կարեւոր տեղ է զբաղեցրել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ընթացող բանակցային գործընթացը:

Մի շարք կազմակերպություններ, մասնավորապես Քաղաքացիական հասարակության ինստիտուտը, նախապատերազմյան շրջանում կրթական աշխատանքներ են իրականացրել՝ հակամարտության բնույթն ուսումնասիրելու, սահմանամերձ տարածքների բնակիչների շրջանում վստահությունը վերականգնելու, «երկխոսության ցանց» ստեղծելու եւ «անվտանգ տարածաշրջան» օրակարգը խթանելու համար: Համագործակցելով գերմանական Inmedio ոչ առեւտրային միջնորդական ընկերության եւ Ադրբեջանում գտնվող գործընկերների հետ, որոնք ակնհայտ պատճառներով հրապարակայնորեն չեն նշվում, Քաղաքացիական հասարակության ինստիտուտը միջնորդության եւ երկխոսության վերաբերյալ դասընթացներ է կազմակերպել Հայաստանի եւ Ադրբեջանի ոչ կառավարական հատվածների ներկայացուցիչների համար Երեւանում, Բաքվում, Բեռլինում եւ Թբիլիսիում: Սակայն այս ջանքերի մասշտաբը ծայրահեղ սահմանափակ էր եւ չէր կարող էապես ազդել հակամարտության զարգացումը որոշող քաղաքական համատեքստի վրա:

Նույնը կարելի է ասել ստեղծագործող մասնագետների՝ կինոգործիչների, երաժիշտների եւ այլոց միջեւ շփումների մասին: Եվրասիա համագործակցություն հիմնադրամը 2020 թվականը նշում է որպես այս ոլորտում իր ծրագրերի գագաթնակետ, երբ պատերազմի սկսվելուց երկու օր առաջ տեղի ունեցավ դրամաշնորհառուների կողմից պատրաստված ադրբեջաներեն պոեզիայի հայերեն թարգմանությունների շնորհանդես: Միեւնույն ժամանակ, ինչպես եւ վերլուծաբանների եւ փորձագիտական շրջանակների ներկայացուցիչների դեպքում, «լուսավորչական» գործունեության միջոցով կուտակվում էր խաղաղաշինության ներուժ, որը 2024-2025 թվականներին պաշտոնական մակարդակով ընթացող խաղաղ գործընթացին զուգահեռ զարգանալով՝ կարող է գործի դրվել ավելի բարենպաստ մթնոլորտում:

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունն իր հայ-ադրբեջանական նախագծերի իրականացման շրջանակում համագործակցել է գործընկերների հետ Վրաստանից, Մեծ Բրիտանիայից եւ Գերմանիայից: Իրականացվել են բազմաթիվ հետազոտություններ, հրապարակվել են գրքեր, ձեռնարկներ եւ մեթոդաբանություններ: Ինչ վերաբերում է ոչ նյութական արդյունքներին՝ երիտասարդների եւ տարբեր խմբերի հետ աշխատանքը նպաստել է քննադատական մտածողության զարգացմանը, համակրանքի ձեւավորմանը եւ խաղաղության մշակույթի տարածմանը:

Հաշվի առնելով անհետ կորածների, ռազմագերիների եւ այլ պահվող անձանց հետ կապված խնդիրը, վերջին տարիներին նորից կարող է արդիական դառնալ հայկական «Ընդդեմ իրավական կամայականությունների» հիմնադրամի, Ադրբեջանի Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոնի, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի (ՀՔԱ) հայկական, ադրբեջանական եւ վրացական բաժանմունքների, ՀՔԱ Վրաստանի ազգային կոմիտեի եւ Լեռնային Ղարաբաղի «Հելսինկյան նախաձեռնություն-92»-ի միջեւ համագործակցության 1990-ականների փորձը: Նրանց ժառանգությունը 2005–2010 թթ. շարունակել է Վանաձորի ՀՔԱ գրասենյակը՝ համագործակցելով Գյանջայի ՀՔԱ կոմիտեի հետ: Այս կազմակերպությունները զբաղվել են նաեւ այն ընտանիքների իրավունքների պաշտպանությամբ, որոնց անդամները դարձել են հակամարտության զոհ: Սակայն հաջորդ մեկուկես տասնամյակի ընթացքում այդ փորձն ըստ էության կորսվեց՝ նախ եւ առաջ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցների գործունեության նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների կիրառած սահմանափակումների հետեւանքով: Մի կողմից՝ այս ուղղությամբ ՀՀ եւ ԱՀ ազգային անվտանգության մարմինների միջեւ սկսած համագործակցությունը կարող է նոր հնարավորություններ բացել, բայց մյուս կողմից՝ Ադրբեջանում դադարել է գործել Կարմիր խաչի միջազգային կոմիտեն, որի աջակցությունն առանցքային դեր է խաղացել տեղական կազմակերպությունների արդյունավետ աշխատանքի համար:

Ինչպես նշվեց վերեւում, խաղաղարար ջանքերի խթանը տրվեց Խաղաղության եւ միջպետական հարաբերությունների հաստատման մասին պայմանագրի տեքստի համաձայնեցմամբ եւ, հատկապես, 2025 թվականին դրա նախաստորագրմամբ, ինչպես նաեւ դրան նախորդող իրադարձություններով՝ սկսած 2023 թվականի վերջից: Համապատասխանաբար, «գերակշռող կառուցողականության» այս շրջանը, որը շարունակվում է այս հետազոտության պահին, կարելի է թվագրել 2023 թվականի վերջից մինչեւ 2024 թվականի սկիզբը: Imagine

կազմակերպության մոտեցումը, որը հիմնականում Վրաստանում հայ-ադրբեջանական երկխոսությունը խթանելուն ուղղված բազմաթիվ ծրագրեր է իրականացրել, որոնցում ներգրավված են եղել երիտասարդներ, լրագրողներ եւ փորձագետներ, արդիական է դարձել այն իրավիճակում, երբ կողմերը սկսել են լուծել գործնական հարցեր: Imagine-ի ներկայացուցիչների խոսքով՝ հիմնական առանձնահատկությունն այն էր, որ երկխոսության իրենց ծրագրերի մասնակիցներին ասվել էր, որ իրենք չեն եկել «թիթեռ նկարելու», եւ որ իրենցից ակնկալվում է աշխատանք եւ խնդիրների լուծում: Մասնավորապես, նրանց հանձնարարվել էր բերել տասը փաստ, որոնք հանգեցրել են Ղարաբաղյան հակամարտության առաջացմանը եւ զարգացմանը: Այնուհետեւ բոլոր պատասխանները քննարկվել են՝ հակառակ կողմի կարծիքների, ընկալումների եւ դասագրքերում ներկայացված պատկերի հետ զուգահեռներ գտնելու համար: Ըստ որում, երկխոսության մասնակիցներից պահանջվում էր առաջնորդվել այն սկզբունքով, որ «հասկանալ՝ չի նշանակում ընդունել»:

Այս տրամաբանության մեջ լուրջ բեկում հանդիսացավ 2023 թվականի վերջին Երեւանի եւ Բաքվի մամուլի ակումբների մեկնարկած «Շփման գիծ» նախաձեռնությունը, որի շրջանակներում արդեն 2025 թվականի կեսերին երկու երկրների գործընկեր հեռուստաալիքներով թողարկվել էր ավելի քան 100 երկխոսային հեռուստածրագիր: Այս ծրագրերի մասնակիցները հետեւում էին նախաձեռնության հիմքում ընկած ընդհանուր մոտեցմանը. զրուցակիցներն ազատ են օգտագործելու ցանկացած փաստ եւ տալու իրենց սեփական մեկնաբանությունները, սակայն զրույցը պետք է հիմնված լինի լուծումների համատեղ որոնման, այլ ոչ թե սեփական ճշմարտացիությունը պնդելու կամ մյուսի մեղքը ապացուցելու ձգտման վրա:

Միեւնույն ժամանակ, չի կարելի չնշել, որ նույնիսկ Երեւանի եւ Բաքվի մամուլի ակումբների համագործակցության գրեթե 30 - ամյա փորձի առկայության պարագայում, նրանց նախաձեռնությունը չէր կարող իրականացվել առանց բրիտանական International Alert կազմակերպության աջակցության, որը EU4Peace ծրագրի երկրորդ եւ երրորդ փուլերում գլխավորել է մեդիա կոնսորցիումը: Ընդհանուր առմամբ, միջազգային կազմակերպությունների առաջատար դերը հայ-ադրբեջանական երկխոսության նախագծերում ամրապնդման միտում ունի առնվազն վերջին 20 տարիների ընթացքում: Վերոհիշյալ ու նմանատիպ նախագծերից շատերը կյանքի են կոչվել EU4Peace ծրագրի շրջանակներում, որտեղ կոնսորցիումներն առաջնորդել են ոչ միայն International Alert, այլ նաեւ Conciliation Resources եւ «Links Europe» կազմակերպությունները, կամ էլ EU4Dialogue մեծածավալ ծրագրի շնորհիվ, որի համար նույնպես միջոցներ են տրամադրել եվրոպացի գործընկերները: Որպես հիմնական դոնորներ ու աջակից գործընկերներ, բացի Եվրամիությունից, հանդես են եկել նաեւ ԵԱՀԿ-ն, Եվրոպայի խորհուրդը, Մեծ Բրիտանիայի կառավարությունը, գերմանական քաղաքական հիմնադրամները, Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամը, SIDA-ն (Շվեդիա), Black Sea Trust-ը, ՄԱԿ-Կանայք կազմակերպությունը, IKV Pax Christi-ն (Նիդեռլանդներ), HEKS-ը (Շվեյցարիա), Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտը, Article 19-ը եւ ուրիշներ: Խիստ բացասական ազդեցություն է ունեցել ԱՄՆ կառավարության կողմից նախագծերի մեծ մասի ֆինանսավորման դադարեցումը, որի արդյունքում մի շարք հեռանկարային խաղաղարար նախաձեռնություններ չեն հասցվել իրենց տրամաբանական ավարտին կամ կասեցվել են հենց սկզբից:

Ինչպես ցույց է տալիս հայ-ադրբեջանական հակամարտության հետ կապված ժողովրդական դիվանագիտության պատմության վերանայումը, երկխոսության բոլոր հնարավոր ոլորտներում ամենատարբեր մեթոդներ են կիրառվել: Այստեղից բնական հարց է ծագում՝ ի՞նչ ազդեցություն են ունեցել այս ջանքերը կարգավորման գործընթացի վրա: Սույն հետազոտության շրջանակներում հարցազրույց տվածներից ոչ մեկն այս հարցին միանշանակ դրական պատասխան չի տվել: Հոռետեսական տեսակետ է արտահայտվել, որ ժողովրդական դիվանագիտությունը չի կարող էական ազդեցություն ունենալ հայ-ադրբեջանական հարաբերությունների վրա, քանի որ կարեւոր որոշումները կայացվում են այլ մակարդակներում, որտեղ հասարակական կարծիքը, որպես կանոն, հաշվի չի առնվում: Քաղաքացիական հասարակության ակտիվիստների եւ լրագրողների գործունեությունը կարող է ազդել մարդկանց մտքերի եւ զգացմունքների վրա, բայց նույնիսկ մեծամասնության դիրքորոշումը չի կարող որոշիչ դեր խաղալ Ադրբեջանի նման ավտորիտար երկրներում:

Նշվել է նաեւ, որ ժողովրդական դիվանագիտությունն ավելի մեծ ազդեցություն կունենար կարգավորման վրա, եթե նրա դերն ուղղակիորեն չսահմանափակվեր Ադրբեջանի իշխանությունների, իսկ որոշ ժամանակահատվածներում՝ նաեւ Հայաստանի իշխանությունների կողմից:

Ընդ որում, հարցվածները նաեւ նշել են, որ երկխոսությունը միշտ նախընտրելի է. շփումները թույլ են տալիս լսել հակառակ կողմին եւ քննարկել միմյանց փաստարկները, չնայած այն հանգամանքին, որ տարբեր ժամանակներում երկխոսության ծրագրերի անկեղծ մասնակիցները մարգինալ փոքրամասնություն են կազմել: Հարցվածներից մի քանիսի կարծիքով՝ ժողովրդական դիվանագիտությունը կարող է արդյունք տալ միայն այն դեպքում, երբ պաշտոնական կողմերն ունենան կարգավորման ճանապարհով գնալու քաղաքական կամք: Նրանցից մեկը նշել է, որ դա առկա է եղել 1997-2001 թվականների միջեւ ընկած ժամանակահատվածում: Մեկ այլ կարծիքի համաձայն՝ ժողովրդական դիվանագիտությունն ավելի կամ պակաս «աշխատող» միջոց է եղել մինչեւ 2020-2023 թվականների հայտնի իրադարձությունները:

«Track 2»-ի համար մեկ այլ մարտահրավեր է համարվել այն, որ Ադրբեջանում քաղաքացիական հասարակության համեմատաբար անկախ հատվածը ազդեցության լծակներ չունի, իսկ Հայաստանի քաղաքացիական հասարակության զգալի մասն առաջնորդվում է ռեւանշիստական տրամադրություններով:

Հարցվածներից մեկը կոնկրետ օրինակ է բերել այն մասին, թե ինքն ինչն է համարում քաղաքացիական հասարակության ապակառուցողական ներգրավվածություն՝ հակամարտությունների կարգավորման եւ վերափոխման գործում. դրանք այն դեպքերն են, երբ խաղաղաշինության մասնակիցների որոշակի հատվածի ձայնը դադարում է այլընտրանք լինելուց եւ միանում է պոպուլիստական -հայրենասիրական դիսկուրսն առաջ մղող «երգչախմբին»: Հայաստանում քննարկվում է այն հարցը, թե արդյո՞ք պետությունը կարող է, հանուն խաղաղության, հրաժարվել մարդու իրավունքներին վերաբերող միջազգային դատական հայցերից, եթե դա նախատեսված է Ադրբեջանի հետ համաձայնեցված պայմանագրով: Մի կողմից՝ իրավապաշտպանները պնդում են, որ նախ պետք է լուծել հանցագործությունների խնդիրը եւ վերացնել դրանց

հետեւանքները, հետո միայն անցնել ձեռքսեղմումների: Մինչդեռ, հակամարտության փոխակերպման կողմնակիցները կարծում են, որ հանուն խաղաղության՝ նախ անհրաժեշտ է միմյանց ձեռք սեղմել: Արդյունքում՝ իրավապաշտպանները միավորվում են իրենց անզիջում դիրքորոշման մեջ՝ այս մոտեցումը հիմնավորելով արդարադատության իրագործման անհրաժեշտության մասին հռետորաբանությամբ: Թերեւս, որ սա այն դեպքն է, երբ դիրքորոշման իրավաչափությունը ստուգվում է գործնականում՝ թե կոնկրետ որ լուծումն է ապահովում հուսալի եւ կայուն խաղաղություն հակամարտող կողմերի միջեւ:

Ժողովրդական դիվանագիտությունը արդյունք է տալիս այն ժամանակ, երբ դրանում ներգրավված են շրջանակներ, որոնք իրապես ունակ են իրենց համայնքներում ձեւավորելու կառուցողական դիսկուրս, եթե ոչ այսօր, ապա գոնե մոտ ապագայում: Բայց այն փուլերում, երբ խաղաղաշինությունը խրախուսվում է պաշտոնական մակարդակում, միշտ առկա է այն ռիսկը, որ այս գործընթացը կարող է ենթարկվել «նորաձեւության հոսանքներին», եւ դրան կարող են միանալ պատահական մարդիկ, ինչպես նաեւ նրանք, ովքեր նախկինում զբաղված էին դրա հակառակն անելով:

ԵՄԱ հետազոտական խմբի կողմից անցկացված հարցազրույցների ընթացքում նշվել է նաեւ, որ «Track 2»-ն իրական ազդեցություն ունի, երբ այն հասնում է հանրային հարթակներ եւ խաղաղության կառուցման գաղափարներ է հաղորդում լայն հանրությանը: Փակ ձեւաչափերն օգնում են միայն դրանց մասնակիցներին՝ ավելի խորը եւ համակողմանիորեն հասկանալ խնդիրները եւ մասնագիտական կապեր հաստատել: Բայց դժվար թե նրանք ինչ-որ ազդեցություն են ունենում կոնկրետ որոշումների կայացման վրա: Նման ձեւաչափերը կարող են օգտակար լինել գործնական խնդիրների լուծման ժամանակ, ինչպիսիք են պատանդների փոխանակումը, անհետ կորած անձանց վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը եւ այլն: Նման դեպքերում հրապարակայնությունը երբեմն նույնիսկ խոչընդոտում է արդյունքի հասնելուն:

Երկխոսության նախաձեռնությունների մասնակիցների կողմից արտահայտված կարծիքներից կարելի է եզրակացնել, որ որքան ավելի ժողովրդավարական են հասարակությունն ու պետությունը, այնքան ավելի արդյունավետ է ժողովրդական դիվանագիտությունը: Նման միջավայրում խաղաղաշինական գործունեությունը ձեւավորում է քաղաքական դիսկուրսը եւ փոխում քաղաքացիների վերաբերմունքը խաղաղության գործընթացի նկատմամբ, չնայած, վերջին հաշվով, որոշումները կայացնում են իրական իշխանություն ունեցողները: Նույնիսկ ավտորիտար համակարգերում կառավարիչները հաշվի են առնում հասարակական տրամադրությունները, եւ ժողովրդական դիվանագիտությունը հասարակական կարծիք ձեւավորելու միջոցով կարող է ազդեցիկ գործիք դառնալ:

Այստեղ սկզբունքայինն այն, որ քաղաքացիական հասարակությունը լիովին չմեկուսացվի պաշտոնական երկխոսությունից: Բանակցությունների որոշակի մանրամասներին հասանելիություն չունենալով՝ անկախ փորձագետները, լրագրողները եւ ակտիվիստները դժվարանում են նպաստել կարգավորման գործընթացին եւ դրանում ներգրավել հանրությանը:

Հենց իրազեկվածության եւ պրոբլեմը խորապես ըմբռնելու գործոնով է պայմանավորված Հայաստանի եւ Ադրբեջանի քաղաքացիական հասարակությունների միջեւ հնարավոր համագործակցության նկատմամբ

թերահավատությունը, ինչպես նաեւ, ըստ Հայաստանում տարածված կարծիքի, այն պատճառով, որ հարեւան երկրում քաղաքացիական հասարակություն կա՛մ գոյություն չունի, կա՛մ մարգինալացված է: Ուրիշ բան՝ փորձագետների միջեւ շփումները (չնայած իրավական կարգավիճակով փորձագիտական համայնքը հաճախ համարվում է քաղաքացիական հասարակություն, բայց այն որոշակի առանձնահատկություններ ունի), որոնք ներկայումս դրական ազդեցություն են ունենում կարգավորման գործընթացի վրա:

Հստակ կարծիք է հնչել, որ «ժողովրդական (քաղաքացիական) դիվանագիտություն» հասկացությունը կիրառելի չէ քաղաքացիական հասարակության խաղաղաշինական գործունեության համար: «Դիվանագիտությունը ստելու արվեստ է», հետեւաբար, քաղհասարակության սեկտորը չի կարող զբաղվել դիվանագիտությամբ: Այն կարող է աջակցել կամ չաջակցել կառավարության կողմից ձեռնարկված այս կամ այն դիվանագիտական նախաձեռնությանը, բայց հակամարտության կարգավորման գործում իր սեփական ներգրավվածության պարագայում պետք է առաջնորդվի «անաչառ ճշմարտախոսության» սկզբունքով:

Սույն հետազոտությամբ նաեւ փորձ է արվել պարզելու, թե հայ-ադրբեջանական երկխոսության ծրագրերի մասնակիցներն ինչն են համարում ժողովրդական դիվանագիտության «ավելացված արժեք»: Հարցվածները նշել են երկու երկրների ներկայացուցիչների միջեւ անմիջական շփումը, տեղեկատվության փոխանակումը, տարածաշրջանային անվտանգության մարտահրավերներն ավելի լավ հասկանալը եւ հեռանկարային զրուցակիցների բացահայտումը:

Հետազոտության համար կարեւոր է եղել նաեւ պարզել, թե Հայաստանի եւ Ադրբեջանի քաղաքացիական հասարակությունների միջեւ համագործակցության որ ոլորտներն են թվում առավել արդյունավետ եւ հեռանկարային: Հարցվածներն ամենից հաճախ նշել են խաղաղաշինության ոլորտը, որն ընդգրկում էր մերձեցմանը, շփումներին նպաստող միջոցառումներ, ինչպես նաեւ տեղեկատվության տարածումը հակամարտության բնույթի եւ դրա կարգավորման գործընթացի վերաբերյալ: Զգալիորեն հետ մնալով՝ երկրորդ-երրորդ տեղերը բաժանել են հումանիտար ոլորտը (մասնավորապես՝ ռազմագերիների, պատանդների, փախստականների թեմայով երկխոսությունը, նրանց հետ կապված իրավապաշտպան գործունեությունը եւ այլն) եւ տարբեր ոչ պաշտոնական, այդ թվում մեդիա հարթակներում կարգավորման մոդելների քննարկումը: Հաջորդ ամենաշատը հիշատակվող ուղղությունը եղել է համատեղ հետազոտությունների անցկացումը:

Ինչ վերաբերում է հետազոտություններին, հարցվածները հատուկ անդրադարձել են «Track 2»-ի ձեռքբերումներն ու սխալները պարբերաբար վերանայելու օգտակարությանը եւ գրեթե միաձայն նշել են նման վերլուծության անհրաժեշտությունը: Նշվել է նաեւ, որ հատկապես դոնորները պետք է հետաքրքրված լինեն այդօրինակ հետազոտություններով, որոնք թույլ կտան մեծացնել խաղաղության կառուցման գործում իրենց ներդրման արդյունավետությունը: Կառուցողական գաղափարներ եւ մոտեցումներ ստեղծելու գործիքի նկատմամբ կա հստակ եւ լայն պահանջարկ: «Անցյալին նայելով՝ դեպի ապագա» տրամաբանությամբ իրականացվող նման հետազոտությունների օգտակարությունը կարող է ավելի մեծ լինել, եթե զուգահեռաբար նկարահանվեն եւ տարածվեն նաեւ խաղաղաշինության պատմությանը նվիրված ֆիլմեր: «Track 2» հարթակի արդյունավետության եւ

հեռանկարների հարցում նախկին սխալներից խուսափելու համար, ցանկալի է կարծիքների փոխանակման մեջ ներգրավել ոչ միայն ժողովրդական դիվանագիտության անմիջական մասնակիցներին, այլեւ տարբեր խմբերի ներկայացուցիչների՝ ըստ մասնագիտության, տարիքի, աշխարհագրական պատկանելության եւ այլն: Խաղաղաշինության փորձի ուսումնասիրման նպատակահարմարության վերաբերյալ հարցվածներից երկուսի արտահայտած որոշ կասկածներ վերաբերում են հակամարտության կողմերի ներգրավվածության առանձնահատկությանը. Հայաստանում արտահայտված քննադատական գնահատականը կարող է բերել մոտեցումների վերանայման՝ արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, մինչդեռ հիմնական պրոբլեմն այն է, որ Ադրբեջանի քաղաքացիական հասարակության վրա ազդելու կարողություն ունեն միայն այդ երկրի իշխանությունները:

ԻՆՉՊԵՍ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

Սույն հետազոտության ընթացքում բացահայտված եւ «Track 2»-ի դերը բարձրացնելուն ուղղված գաղափարներից եւ առաջարկներից կարելի է առանձնացնել հետեւյալները.

- խաղաղության հաստատումը դիտարկել որպես Հայաստանում եւ Ադրբեջանում ժողովրդավարության առաջխաղացման հետ փոխկապակցված եւ միասնական գործընթաց,
- խթանել նորարարական ու ստեղծագործական մոտեցումները խաղաղաշինության մեջ,
- ավելի մեծ թվով հեղինակավոր միջազգային փորձագետների ներգրավել երկու երկրների միջեւ երկխոսությունում,
- բարձրացնել քաղաքացիական հասարակության եւ լրագրողների, հատկապես՝ երկկողմ նախաձեռնություններին մասնակցողների կրթական մակարդակը, ինչպես նաեւ նրանց փոխանցել սեփական զգացմունքներն ու հույզերը կառավարելու եւ ինքնաարտահայտման ունակություններ,
- խուսափել խաղաղաշինության գործընթացում քաղաքական շահեր հետապնդող, մանիպուլյացիաների ու սադրանքների հակված անձանց ներգրավումից,
- պարբերաբար կազմակերպել մտագրոհներ եւ քննարկումներ այն մասին, թե «Track 2»-ի շրջանակում ինչ կարելի է անել հետագայում:

Քաղաքացիական դիվանագիտությունը վակուումում տեղի չի ունենում, այն կախված է բազմաթիվ արտաքին գործոններից, որոնք նույնպես դիտարկվել են այս հետազոտության մեջ: Դրանցից ամենակարեւորը հակամարտության ընթացքն է. սրացումների ժամանակահատվածներում կառուցողական երկխոսությունը գրեթե անհնար է եղել: Կարեւորությամբ երկրորդ տեղում ժողովրդական դիվանագիտության նկատմամբ ադրբեջանական իշխանությունների վերաբերմունքն է, որը խստության տարբեր չափաբաժիններով սահմանափակում է քաղաքացիական հասարակության հնարավորությունները: Միջազգային եւ օտարերկրյա դոնորների դրամաշնորհային աջակցությունը նույնպես նշանակալի է, որը, սակայն, 2025 թվականի սկզբից զգալիորեն նվազել է՝ ԱՄՆ նոր վարչակազմի քաղաքականության պատճառով:

Տարբեր փուլերում հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման հնարավորության վրա բացասաբար են ազդել այնպիսի իրադարձությունները, ինչպիսիք են վերոնշյալ 2016 թվականի ապրիլյան սրացումը ԼՂ-ում, համավարակը, 44-օրյա պատերազմը, Ռուսաստանի ներխուժումն Ուկրաինա, 2023 թվականի սեպտեմբերին Արցախի հայերի զանգվածային բռնագաղթը եւ Ադրբեջանում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ու լրագրողների ձերբակալություններն ու դատապարտումները:

Բացի այդ, հարկ է նշել փորձագետների, մտավորականների եւ լրագրողների միջեւ կապեր հաստատելու ռուսական միանվագ նախաձեռնությունները, որոնք, սովորաբար, խաղաղաշինության իմիտացիայի բնույթ են կրել:

Զանգվածային լրատվամիջոցները հակամարտության մեջ ունեցել են առանցքային դեր, սակայն նրանց կողմից փոխանցվող բովանդակությունը, չնչին բացառությամբ, ենթարկված է եղել ամենախիստ քաղաքական կոնյունկտուրային: Լրագրողներն իրենց ընկալում էին որպես պատերազմի մասնակիցներ, նրանցից լավագույնները նաեւ պայքար էին մղում կեղծ տեղեկատվության դեմ: Միեւնույն ժամանակ, նրանք խոստովանում են, որ ազնիվ լրագրությունը, մեծ հաշվով, անկարող է կանխել հակամարտությունները, մինչդեռ քարոզչությունը թշնամու կերպարի ձեւավորման եւ փոխադարձ ատելություն տարածելու շատ արդյունավետ գործիք է դարձել:

Առնվազն մինչեւ 2020 թվականը հայկական բազմաթիվ լրատվամիջոցներ, նույնիսկ՝ որակյալ եւ անկախ, սահմանային միջադեպերին վերաբերող որոշ թեմաներ լուսաբանելիս դառնում էին «պետականամետ», այն իմաստով, որ փոխանցում էին գերիշխող պաշտոնական դիրքորոշումը: Ինքնագրաքննությունն ու կաշկանդվածությունը խանգարում էին, որ լսարանը իրական իրադարձությունները կարողանա ընկալել օբյեկտիվորեն: Դրա պատճառը, թերեւս, հանրային պարսավանքից խուսափելու ձգտումն էր: Իսկ երբ որեւէ տեղ հայտնվում էր տեղեկատվություն, որը դուրս էր գալիս պաշտոնական դիսկուրսի շրջանակներից (օրինակ՝ 1980-ական թվականների վերջերին Հայաստանում ադրբեջանցիների հետապնդումների մասին), հայկական լրատվամիջոցների ճնշող մեծամասնությունը դա անտեսում էր: Հետազոտության շրջանակում նաեւ կարծիք է հնչել, որ հայկական ԶԼՄ-ներում խաղաղության մասին ավելի շատ խոսվում է «առաջին հարթակի» («Track 1») մակարդակում, մինչդեռ քաղհասարակության մակարդակում զգալիորեն ավելի քիչ են հակված դրան:

Ներկա փուլում, կարգավորման հեռանկարի ի հայտ գալու հետ մեկտեղ, մասնագիտական էթիկայի կանոնների պահպանումը եւ քաղաքակիրթ երկխոսության համար պայմանների ստեղծումը դառնում են ավելի ու ավելի կարեւոր: Մասնավորապես՝ տեղեկատվության հավաստիությունը, դրա անկողմնակալ փոխանցումը, հակառակ կողմի դեհումանիզացիայից հրաժարումը չեն կարող արդյունք չտալ հակամարտության հաղթահարման գործընթացում: Կարեւոր է նաեւ, որ տեղեկատվության սպառողը լինի մեդիագրագետ եւ կարողանա քննադատաբար վերլուծել ու ընկալել իրեն առաջարկվող նյութը:

Գործուն ժողովրդավարության կառուցումն ու զարգացումը, որի անբաժանելի մասն են կազմում լրատվամիջոցները, կարող է զգալի ներդրում ունենալ խաղաղության գործընթացում: Իհարկե, ցանկալի կլիներ, որ երկու կողմերն էլ

ունենային նման գիտակցություն, սակայն Ադրբեջանը, հարցվածների կարծիքով, այլ ուղղությամբ է շարժվում: Անկախ այս վերջին հանգամանքից՝ որակյալ լրատվամիջոցները կարող են օգնել Հայաստանին դուրս գալու այն «թակարդից», որում հայտնվել է: Լրատվամիջոցներն ունեն նաեւ մեկ այլ կարեւոր գործառույթ՝ երկիրը ներկայացնել օտարերկրյա լսարանին, հիմնականում ռուսերեն եւ անգլերեն, բայց նաեւ ադրբեջաներեն, թուրքերեն եւ այլ լեզուներով:

Քաղաքացիական հասարակության գործունեության պայմանները նույնպես հայ-ադրբեջանական երկխոսության արդյունավետության վրա ազդող գործոններ են: ԵՄԱ հետազոտության մասնակիցների կարծիքով՝ Ադրբեջանում ՀԿ-ների մեծ մասը գործում է կառավարության ուղիղ վերահսկողության ներքո, որի նպատակով ստեղծվել են հատուկ պետական ինստիտուտներ եւ կառավարման համակարգեր: Խաղաղարարների դեմ վաղուց են օգտագործվել «լրտեսության», «դավաճանության» եւ այլ մեղադրանքներ: Այս հանգամանքները խոչընդոտել են եւ շարունակում են խոչընդոտել հանրության կառուցողական ներգրավվածությանը: Ադրբեջանական կողմից երկխոսության նախաձեռնություններին միանալու պատրաստակամությունը հիմնականում դրսեւորվում է վերեւից համապատասխան հավանություն ստացածների մասնակցությամբ: Մի շարք հայկական կազմակերպություններ էլ ինքնուրույն կերպով հրաժարվում են համագործակցությունից՝ համարելով, որ հարեւան երկրի հնարավոր գործընկերները իշխանությունների հետ միասին պատասխանատվություն են կրում պատերազմի եւ Արցախի իսպառ հայաթափման համար: Սա երկար ժամանակ անբարենպաստ պայմաններ է ստեղծել երկխոսության համար, սակայն այս տարվա օգոստոսին խաղաղության գործընթացում արձանագրված առաջընթացը կարող է դրական ազդեցություն ունենալ իրավիճակի վրա:

Հայ-ադրբեջանական երկխոսության նախաձեռնությունների առանձնահատուկ խնդիրը երկու երկրների հատուկ ծառայությունների կողմից դրանց «վերահսկողությունն» է: Հետեւաբար, այս հետազոտության մեջ խաղաղարարների եւ նրանց միջեւ գործակցության փոխադարձաբար ընդունելի ձեւերի հարցը չէր կարող անտեսվել: Բոլոր հարցվածները կարծում են, որ ժողովրդական դիվանագիտության մասնակիցները պետք է գործեն լիովին անկախ, այդ թվում՝ հատուկ ծառայություններից: Միեւնույն ժամանակ, մեծամասնությունը նշում է, որ, ի պատիվ հայկական համապատասխան կառույցների, վերջիններս չեն փորձել միջամտել իրենց գործունեությանը: Մինչդեռ, հարցվածների կարծիքով, Ադրբեջանում նման համագործակցությունը պարտադիր է քաղաքացիական հասարակության զգալի մասի համար: Միեւնույն ժամանակ, չնայած հատուկ ծառայությունների հետ փոխգործակցության սկզբունքորեն անընդունելի լինելուն, անվտանգության սպառնալիքների հետ անմիջականորեն կապված իրավիճակներում դա անխուսափելի է: Ավելին, խաղաղաշինության որոշակի ոլորտներում, օրինակ՝ պատանդներին եւ անհետ կորած անձանց վերաբերող հարցերում, որտեղ հատուկ ծառայությունների տեղեկություններին որոշակի հասանելիությունն անհրաժեշտություն է, արդյունավետությունն ուղղակիորեն կախված է նրանց հետ շփումներից:

Կտրականապես անընդունելի է, որ երկխոսության նախաձեռնությունների մասնակիցներին տրամադրվեն նախապես պատրաստված հարցերի ցուցակներ կամ հրահանգներ՝ ադրբեջանցիների հետ շփվելիս օգտագործելու համար:

Հարցվածներից մեկը ենթադրել է, որ հատուկ ծառայությունների կողմից խաղաղարարների գործունեության մասին տեղեկատվություն պահանջելու փորձերը զուտ ձեւականություն են, քանի որ նրանք այդ ինֆորմացիան ստանալու բոլոր հնարավորություններն ունեն՝ առանց քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կամ լրագրողների հետ անմիջական շփման:

Հետազոտության մասնակիցներն անդրադարձել են նաեւ խաղաղության կառուցման գործընթացում հայկական սփյուռքի դերին: Ոմանք նշել են, որ այդ դերը պետք է սահմանափակվի երկխոսության նախաձեռնությունների ֆինանսավորմամբ: Բովանդակային ներգրավվածությունը, հավանաբար, կբարդացնի գործընթացը, քանի որ հայաստանյան հասարակության եւ արտերկրի հայկական համայնքների միջեւ հետաքրքրությունների եւ ընկալումների զգալի տարբերություն կա: Նույնիսկ, երբ սփյուռքի ներկայացուցիչները կրթված են եւ սիրում են իրենց պատմական հայրենիքը, նրանք հազվադեպ են կարողանում հասկանալ իրավիճակը, պարզապես այն պատճառով, որ Հայաստանում չեն ապրում:

Հարցվածների մեկ այլ խմբի կարծիքով սփյուռքն իմաստալից մասնակցության ներուժ ունի: Սա պայմանավորված է իրենց բնակության երկրների իշխանությունների կողմից նրանց «անխոցելիությամբ»: Հետեւաբար, հայկական այդ համայնքների ներկայացուցիչներն ազատ են քաղաքական ճնշումներից եւ, հենվելով միայն համամարդկային արժեքների վրա, կարող են ստեղծել երկխոսության միջավայր, այդ թվում՝ ներգրավելով արտասահմանյան երկրների ազդեցիկ գործիչների: Բացի դրանից, այլ միջէթնիկ հակամարտությունների փորձը ցույց է տալիս, որ սփյուռքը կարող է կարեւոր դեր խաղալ խաղաղության նախաձեռնություններում: Այդպես եղավ, մասնավորապես, Հյուսիսային Իռլանդիայի հակամարտության դեպքում, երբ իռլանդական սփյուռքը որոշեց հրաժարվել պատերազմում իր ներդրումներից եւ փոխարենը իր ռեսուրսներն ուղղորդել խաղաղության գործընթացին: Մշտապես հակամարտության մեջ գտնվելով՝ կարող ես կորցնել իրականության զգացողությունը, եւ այս առումով՝ կողքից թարմ հայացքը հաճախ անհրաժեշտ է:

Հետազոտության ընթացքում ընդգծվել է, որ սփյուռքը միասնական կառույց չէ, այն շատ բազմազան է՝ ինչպես աշխարհայացքների, այնպես էլ հնարավորությունների առումով: Սփյուռքի որոշ կազմակերպություններ հետաքրքրված չեն կոնֆլիկտների կարգավորմամբ, քանի որ դա կարող է իրենց ողջ գործունեությունն ու ֆինանսավորումը դնել հարցականի տակ: Մյուսները, ընդհակառակը, կարող են օգտակար լինել իրենց գիտելիքներով, փորձով, ռեսուրսներով եւ կապերով: Հետեւաբար, կարեւոր է հասկանալ, թե սփյուռքահայության որ հատվածներն են խոչընդոտ հանդիսանում հակամարտության կարգավորման համար, եւ որոնց հետ է պետք ամրապնդել համագործակցությունը, ներառյալ՝ քաղաքացիական դիվանագիտության մակարդակում:

Մտահոգություն է արտահայտվել, որ հայկական սփյուռքում, անկախ բնակության երկրից, կա մի հատված, որը «խայտառակ ռուսամետ» է դարձել: Իրենց դիրքորոշումը նրանք բացատրում են այն մտայնությամբ, որ Ռուսաստանից հեռանալով՝ «Հայաստանը կհայտնվի թուրքի երախում… Թուրքիան կգա ու ձեզ կոչնչացնի…»: Արտերկրի հայերի այս կատեգորիայի համար ընդունելի է, որ իրենց հայրենիքը Ռուսաստանի «գուբեռնիայի» կարգավիճակն ունենա:

Եթե հետազոտության մասնակիցների մեծ մասը սփյուռքի դերը գնահատում էր որոշակի կասկածամտությամբ, ապա քաղաքացիական դիվանագիտության միջոցով հակամարտությունների կարգավորման գործում միջազգային դոնոր կազմակերպությունների վճռորոշ ներդրումը ոչ մեկի մոտ կասկած չէր առաջացնում: Նրանց աջակցությունը համարվում էր անգնահատելի եւ անփոխարինելի: Ռեսուրսային ապահովումից բացի, նրանց ներգրավվածությունը կարեւորություն էր հաղորդում «Track 2»-ին: Սակայն դա դեռ չի նշանակում, որ միջազգային դոնորների գործունեության մեջ բացթողումներ ու թերություններ չկան: Հարցման որոշ մասնակիցներ դոնորների աշխատանքը համարել են անարդյունավետ, իսկ ներդրումը՝ անբավարար, դա համարելով հայ-ադրբեջանական հակամարտությունը եւ քաղհասարակության սեկտորի դերը իրենց առաջնահերթությունների շարքում չներառելու արդյունք: Հատկացված միջոցների բաշխումը միշտ չէ, որ նպաստել է դրանց նպատակային օգտագործմանը եւ տեղերում արդյունավետ աշխատանքին: Ինչպես նշել է փորձագիտական համայնքի մի ներկայացուցիչ՝ այն փաստը, որ երկխոսության նախագծերի գրեթե բոլոր ադրբեջանցի մասնակիցները ողջունել են 2020 թվականի պատերազմը, ինքնին վկայում է միջազգային գործընկերների եւ դոնորների աշխատանքի թերությունների մասին: Բացի այդ, մասնավորապես բնապահպանական ՀԿ-ների ներկայացուցիչները շեշտել են, որ միջազգային ֆինանսական գործիքները, որոնք կենտրոնացած են միայն տնտեսական արդյունքների ստացման վրա, նաեւ բացասաբար են անդրադառնում բնության պահպանության ուղղված իրենց աշխատանքի վրա:

Սա ընդգծում է «Track 2» հարթակում իրականացվող գործունեության պարբերական վերլուծության եւ դրա արդյունավետության բարձրացման ուղիների որոնման, ինչպես նաեւ այն նախաձեռնությունների եւ դերակատարների նույնականացման կարեւորությունը, որոնք իրական ներդրում են ունենում խաղաղաշինության գործում: Այս հետազոտությունը, մասնավորապես, բացահայտեց միջազգային դոնոր կազմակերպությունների օգնությամբ ստեղծված երկխոսության հարթակներում ներառականության եւ բազմազան ներկայացվածության պակասը: Միեւնույն ժամանակ, կարեւոր է, որ գործընթացում ներգրավվեն խաղաղության նկատմամբ իրական եւ անկեղծ հետաքրքրություն ունեցող մասնակիցներ: Այս հարթակներում հանդիպումները պահանջում են ավելի մեծ ինտենսիվություն եւ հետեւողականություն: Առավել մանրամասն, հաշվի առնելով ինչպես խաղաղաշինական գործընթացի տարբեր բաղադրիչների դերը, այնպես էլ «ընթացիկ պահի» առանձնահատկությունները՝ «Եզրակացություններ եւ առաջարկություններ» բաժնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքացիական դիվանագիտության հավելյալ արժեքին հասնելու համար, այն պետք է առաջ անցնի պաշտոնական բանակցային գործընթացի օրակարգից: Երբ Հայաստանի եւ Ադրբեջանի առաջին դեմքերի մակարդակով եւ այլ միջպետական դիվանագիտական հարթակներում կողմերն ավելի կառուցողական են եւ պատրաստ են ավելի հեռուն գնալ, քան իրենց թույլ են տալիս «Track 2»-ի մասնակիցները, վերջինի արդիականությունը կարող է կասկածի տակ դրվել:

Նման իրավիճակի առաջին նշաններն ի հայտ եկան 2025 թվականի օգոստոսի 8-ից հետո: Սա չի նշանակում, որ փորձագետների եւ լրագրողների բացատրական աշխատանքը հայ եւ ադրբեջանցի լայն հանրության համար դադարում է լինել անհրաժեշտություն: Սակայն դա քաղաքացիական դիվանագիտության մի շարք ուղղություններից մեկն է միայն եւ չի սպառում վերջինի առաքելությունը:

Պաշտոնական՝ «Track 1» մակարդակից քաղաքացիական դիվանագիտության՝ «Track 2»-ի հետ մնալն ակնհայտ հնարավորություններ է ստեղծում երկխոսության այնպիսի ծրագրերի համար, որոնք անմիջական կապ ունեն որոշումներ ընդունող անձանց հետ, ինչը, իր հերթին, չի կարող չազդել դրանց անկախության վրա: Ինչքան էլ որ պայմանական «Track 1.5»-ն օգտակար լինի, այն ամբողջությամբ չի կարող փոխարինել խաղաղության կառուցման այլ ձեւաչափերին, հատկապես, երբ վերաբերում է այն հարցերին, որոնք ներառված չեն պաշտոնական դիվանագիտության ընթացիկ օրակարգում, օրինակ՝ շրջակա միջավայրը, մարդու իրավունքներն ու ազատությունները, մշակութային երկխոսությունը եւ այլ հումանիտար ոլորտներ: Հետեւաբար, քաղաքացիական դիվանագիտության ներուժը լիարժեք իրացնելու համար կարեւոր է, որ հնարավորություններ ստեղծվեն այն մարդկանց ներգրավման համար, որոնք իրենց արդյունավետությունը նախկինում արդեն ապացուցել են, սակայն նոր իրողությունների հետեւանքով հայտնվել են լուսանցքում:

Վստահության մթնոլորտի ձեւավորմանը՝ ռազմական էսկալացիայի բացառման, հաղորդակցությունների ապաշրջափակման, սահմանազատման եւ սահմանագծման գործընթացներին զուգահեռ, էականորեն կարող են նպաստել անհետ կորածների եւ կալանավորված անձանց խնդիրների լուծումը, ինչպես նաեւ սահմանամերձ գյուղերի բնակիչների միջեւ կապերի հաստատումը: Այս նախաձեռնությունները պահանջում են քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցություն եւ անմիջականորեն ազդում են խաղաղության գործընթացի ընկալման վրա՝ ընտանիքների, կոնկրետ հայերի ու ադրբեջանցիների մակարդակում: Հետեւաբար, դրանց բազմակողմանի աջակցությունը թե՛ միջազգային կառույցների, թե՛ երկու երկրների ազգային իշխանությունների կողմից, կարող է զգալիորեն բարելավել խաղաղ գործընթացի մթնոլորտը:

Պաշտոնական խաղաղ գործընթացից քաղաքացիական հասարակության զգալի հատվածի մեկուսացվածության հաղթահարման կարեւոր քայլ կարող է դառնալ իշխանությունների ձեռնարկած քայլերի նկատմամբ քննադատական մտածողության զարգացումը: Դա թույլ կտա իրական մտադրությունները տարբերել ձեւական քայլերից, ստեղծագործ մոտեցումները՝ հեռանկարային գործողությունների արհեստական ձգձգումներից: Քննադատական մտածողության խթանումը, մասնավորապես հակամարտության թեմայի շրջանակում, հատկապես արդիական է կրթության ցածր որակի, տեղեկատվական դաշտի զգալի հատվածի կողմնակալության եւ քաղաքակիթ բանավեճի ակնհայտ պակասի պայմաններում: Խորքային, համարձակ եւ պրոֆեսիոնալ վերլուծությունը, անվերապահ համաձայնողականության մերժումը նախադրյալներ են ստեղծում այլընտրանքային լուծումների որոնման եւ առաջընթացի խթանման համար: Քաղաքացիական հասարակության կողմից նման ներդրումն առանձնահատուկ կարեւորություն է ստանում ներկա պայմաններում, երբ միջազգային եւ տարածաշրջանային համատեքստը Բաքվի

եւ Երեւանի առջեւ բացել է հնարավորությունների պատուհան, որը, սակայն, կարող է փակվել կողմերի դանդաղկոտության եւ անվճռականության հետեւանքով:

Վերջին տարիների նախաձեռնությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առավել արդյունավետ են այն ծրագրերը, որոնք բնութագրվում են հրապարակայնությամբ եւ լայն հասարակությանը հայ-ադրբեջանական հարաբերությունների արդիական հարցերի քննարկումներում ներգրավելու ունակությամբ: Հաշվի առնելով երկու երկրների կառավարման համակարգերի տարբերությունը՝ դժվար է ենթադրել, որ փակ դռների հետեւում անցկացվող քննարկումները կարող են նպաստել կարգավորման գործընթացի արագացմանը: Մինչդեռ, օրինակ, հեռուստատեսային եթերում կազմակերպվող քննարկումներն անուղղակիորեն ներգրավում են ողջ լսարանը: Դա օգնում է հաղթահարել Հայաստանի եւ Ադրբեջանցի քաղաքացիների օտարացումը ինչպես երկկողմ հարաբերությունների օրակարգից, այնպես էլ՝ միմյանցից:

«Track 2»-ի մասնակիցները պետք է հրաժարվեն ագրեսիայից եւ միմյանց նկատմամբ կտրուկ, միակողմանի մեղադրանքներից: Միեւնույն ժամանակ, նրանց պետք է բնորոշ լինեն բացախոսությունը եւ սուր հարցերից չխուսափելու պատրաստակամությունը: Թե՛ մեդիատիրույթում, թե՛ այլ հարթակներում երկխոսության այդպիսի հմտությունների համադրումը ենթադրում է ոչ միայն կառուցողական քննարկումների ունակ մասնակիցների ընտրություն, այլ նաեւ արդյունավետ մոդերացիա:

Մի կողմից՝ քաղաքացիական դիվանագիտության արդյունավետությունը մեծանում է, երբ երկխոսությանը հրավիրվում են խաղաղ գործընթացում իրենց ներդրումն ունեցող երկրներից (Եվրամիություն, որոշ անդամ պետություններ, ԱՄՆ) այնպիսի հեղինակավոր փորձագետներ, որոնք հետաքրքրված են, պահանջված, որոշակի վստահություն են վայելում: Քննարկումներին Հարավային Կովկասում ազդեցության լծակները պահպանող Ռուսաստանի հնարավոր ներգրավման նկատմամբ՝ խաղաղարար նախաձեռնությունների մասնակիցների մոտ կայուն բացասական վերաբերմունք է ձեւավորվել թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում: Սակայն Մոսկվայի կողմից տարածաշրջանի գործերին իր ներգրավվածության բնույթի վերանայումը եւ դրա ինքնիշխանության նկատմամբ հարգանքը, թե՛ պաշտոնական մակարդակում, թե՛ փորձագիտական-վերլուծական միջավայրում, կարող է դռներ բացել նաեւ ռուսաստանյան ներկայացուցիչների համար: Միեւնույն ժամանակ, հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման հարցի ներառումը լայն տարածաշրջանային եւ միջազգային համատեքստում, չի չեղարկում հայ-ադրբեջանական ուղղակի երկխոսության առաջնահերթությունը:

2025թ. օգոստոսի 8-ին Վաշինգտոնում արձանագրված առաջընթացը բարձրացնում է երկկողմ ձեւաչափի կարգավիճակը՝ որպես տարածաշրջանի զարգացման հեռանկարների համար առանցքային ուղղություն: Սա, անշուշտ, վերաբերում է ոչ միայն պաշտոնական մակարդակին, այլ նաեւ քաղաքացիական դիվանագիտությանը: Մասնավորապես, կողմերը պետք է օգտվեն իրավիճակից եւ երկխոսության նախագծերի շրջանակներում միջոցառումներ կազմակերպեն անմիջապես Հայաստանում եւ Ադրբեջանում:

«Track 2» հարթակի համար բարենպաստ պայմանների ձեւավորման հեռանկարները, դրական կողմերի հետ մեկտեղ, նաեւ որոշակի ռիսկեր են պարունակում: Խաղաղության կառուցման «մոդան» չի կարող իրավիճակային եւ պատեհապաշտ հետաքրքրության առարկա չդառնալ ինչպես Հայաստանի եւ Ադրբեջանի ներսում, այնպես էլ արտաքին դերակատարների շրջանում: Այս առումով, կարեւոր է դառնում գործընթացի հետեւողական, պատասխանատու մասնակիցներին դրա ժամանակավոր «ուղեկիցներից» տարբերակելու խնդիրը:

Հայաստանի եւ Ադրբեջանի մեդիա եւ փորձագիտական համայնքների ներկայացուցիչների համագործակցության պարտադիր բաղադրիչ պետք է լինեն ապատեղեկատվության, թշնամանքի ու քսենոֆոբիայի քարոզչության, ինչպես նաեւ հակամարտության սրմանն ու պահպանմանը միտված հիբրիդային մեթոդների դեմ պայքարի միջոցառումները: Միմյանց դեմ կիրառվող արտաքին քարոզչությունը, երրորդ երկրների տեղեկատվական արտահոսքերով սնուցվող փոխադարձ թշնամանքը պետք է փոխարինվի դրանցից պաշտպանվելու համատեղ մեխանիզմներով: Մասնավորապես, անհրաժեշտություն է դառնում Բաքվի եւ Երեւանի միջեւ համաձայնությանը խոչընդոտող ապակառուցողական քարոզչության գործիքակազմի ուսումնասիրությունը, համապատասխան «հակաթույն» մշակելու եւ այդ ջանքերը տեղեկատվական եւ վերլուծական ոլորտում համատեղ դրական քայլերի հետ ներդաշնակեցնելու խնդիրը:

Ինչպես բազմիցս ընդգծվել է այս հետազոտության մասնակիցների պատասխաններում, հայ-ադրբեջանական քաղաքացիական դիվանագիտության փորձը, ձեռքբերումներն ու ձախողումները պահանջում են պարբերական ուսումնասիրություն եւ վերլուծություն: Դրա դինամիկ պատմության եւ ներկա վիճակի վերաբերյալ գիտելիքների թարմացումը կարող է դառնալ կարեւոր ռեսուրս նոր գաղափարների ձեւավորման եւ գործնական նախաձեռնությունների մեկնարկի համար:

www.ypc.am